Ազգ
Azg
15 ՅՈՒՆԻՍ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 109(4728)
ISSN: 1829-1651

# Կոմյունիկե չի ստորագրվել, բայց տպասենք կաթողիկոսի վերադարձին՝ պարզության ակնկալիքով

«Որեւէ փաստաթուղթ երկու եկեղեցիների միջեւ դեռ չի ստորագրվել», վրացական լրատվամիջոցների միջոցով տարածված կեղծ կոմյունիկեի առնչությամբ «**Ազգի**» հարցին երեկ այսպես պատասխանեց Վիրահայոց թեմի առաջնորդ **Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը**: Նրա հավաստմամբ, դեռեւս աշխատանք է տարվում այն փաստաթղթի վրա, որը հավանական է, որ հայ եւ վրաց եկեղեցիների հոգեւոր առաջնորդները ստորագրեն այսօր:

Ամենայն առատությամբ վրացական կայքէջերը տեղեկացնում են Վրաստանի նախագահական գրասենյակի հայտարարության մասին, որում Գարեգին Բ-ի այցելությունը Վրաստան պատմական է որակվում: Ըստ Միխեիլ Սաակաշվիլու մամուլի քարտուղար **Մանանա Մանջղալաձեի**, Հայոց կաթողիկոսի այցը «շարունակությունն է պատմական այն հարաբերությունների, որ ավանդաբար գոյություն ունեն երկու ժողովուրդների միջեւ»:

Իսկ մինչ այդ շարունակվում է Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հովվապետական այցը Ջավախք, որի մասին վրացական լրատվամիջոցները առանձնապես ոչինչ չեն հիշատակում, բավարարվելով ընդհանրական ձեւակերպումներով փոքր լրատվությամբ, իսկ հայոց կաթողիկոսարանից էլ լրահոսն ուշացած է տարածվում՝ առնվազն մեկ օր հետ թվագրությամբ: Դժվար է հասկանալ, թե ինչու նման իրապես պատմական այցելությունն այսքան թույլ է լուսաբանվում, իսկ պաշտոնական լրատվությունն էլ առավելապես տեղ է հասնում առնվազն մեկ օր ուշացումով՝ դադարելով հետաքրքրություն առաջացնել:

Այցը դեռ մի կողմ, բայց այն հանգամանքը, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը լռություն է պահպանում վրացական մամուլում հայտնված ու իբր հունիսի 11-ին ստորագրված կոմյունիկեի առնչությամբ, որի կապակցությամբ միայն հերքվեց դրա ստորագրված լինելը, հիմնավոր կասկածների տեղիք է տալիս, որ հայտնված տեքստը հեռու չէ կոմյունիկեի նախագծային տարբերակից:

Հնարավոր է, որ այսօր ստորագրվելիք փաստաթղթում որոշ դրույթներ բանակցված լինեն ու այլ տեքստով ներկայացվեն, բայց դժվար է հասկանալ Հայոց եկեղեցու լռությունը այս պարագայում, հատկապես երբ կեղծ կոմյունիկեի տեքստի երեւան գալու դրդապատճառներն ու ակնկալվող արդյունքը եւս չեն բացատրվում ոչ եկեղեցու, ոչ, առավել եւս, վրացական կողմից: Մինչդեռ տրամաբանական կլիներ ակնկալել, որ վրացական կողմը բացատրեր, թե ինչպես է նման տեքստը հայտնվել մամուլում եւ ինչու: Ցանկալի կլիներ, որ դա արվեր առնվազն հյուրընկալության կանոնների շրջանակներում կամ գոնե հայկական կողմի պահանջով:

Հուսանք, որ Երեւան վերադառնալուն պես Հայոց կաթողիկոսը հանրությանը կտեղեկացնի այցի մանրամասների ու տպավորությունների մասին՝ չբավարարվելով սովորական «մամուլի հաղորդագրություն»-ով:

Ա. Հ.

# Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն է իր ճակատագրի տերը

## *Կազանին կարող է հաջորդել մի փուլ, երբ ԼՂՀ-ն կդառնա բանակցությունների մասնակից*

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Առաջին փուլը մենք կարող ենք համարել եզրափակված, երբ հնարավորություն կլինի անցնելու երկրորդ փուլին, «երբ ոչ միայն Հայաստանը եւ Ադրբեջանը, այլեւ Լեռնային Ղարաբաղը իր համաձայնությունը տա հիմնարար սկզբունքներին»: Կազանում առաջին փուլի ավարտ ակնկալելու եւ հաջորդ փուլն արդեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասնակցությամբ մեկնարկելու առնչությամբ հարցին երեկ այսպես է պատասխանել Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը** տարածաշրջանային այցի շրջանակներում պաշտոնական այցելությամբ Երեւանում գտնվող Շվեդիայի ԱԳ նախարար Կարլ Բիլդտի հետ համատեղ ասուլիսում:


ՖՈՏՈԼՈՒՐ

Ինչ վերաբերում է խաղաղապահ ուժերին, ապա Նալբանդյանն ընդգծել է, որ նախագահներ Օբամայի, Սարկոզիի եւ Մեդվեդեւի Լ՛Ակվիլայում եւ Մուսկոկայում հրապարակած վեց դրույթների շարքում կար նաեւ Ղարաբաղի շուրջը խաղաղապահ գործողության պահանջը: «Բայց այս հարցի վերաբերյալ մանրամասներ վերջին երեք տարիների ընթացքում չեն քննարկվել: Եթե չի քննարկվել, ապա որեւէ պայմանավորվածություն ձեռք չի բերվել»:

Նալբանդյանն իր համաձայնությունն է հայտնել Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակյանի՝ համանախագահների հետ վերջին հանդիպման ժամանակ հայտարարությանը, որ առանց Լեռնային Ղարաբաղի անմիջական ներգրավման բանակցային գործընթացում անհնարին է հիմնախնդրի լուծումը: «Անհնար կլինի անցնել երկրորդ փուլին, եթե Ղարաբաղի կողմից համաձայնություն չլինի հիմնարար սկզբունքների վերաբերյալ», նշել է Հայաստանի ԱԳ նախարարը:

*Տես էջ 3*

# Տիգրան Սարգսյանը կմեկնի Լոնդոն

ՀՀ կառավարության տեղեկատվության ու հասարակայնության հետ կապերի վարչությունից տեղեկացանք, որ այսօր վարչապետ Տիգրան Սարգսյանն աշխատանքային այցով կմեկնի Միացյալ Թագավորություն: Վարչապետը Բուքինգհեմյան պալատում ներկա կլինի արքայազն Չարլզի ու Հայաստանի նախկին վարչապետ Արմեն Սարգսյանի նախաձեռնած բարեգործական ծրագրերին: Նաեւ նախատեսվում է, որ Տիգրան Սարգսյանը կհանդիպի տարբեր երկրներից Լոնդոն ժամանած հայ գործարարների հետ: Վարչապետը նաեւ կայցելի բրիտանական BBC գործակալության կենտրոնակայան ու հարցազրույց կտա գործակալությանը:

Տիգրան Սարգսյանին ուղեկցող պատվիրակության կազմում ընդգրկված են Երեւանի քաղաքապետն ու Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը:

Ի. Պ.

# Մաքսիմ Վեռներ-Կրեկչյանը Ֆրանսիայի նախագահության թեկնածո՞ւ

Սորբոնի համալսարանի 21-ամյա ուսանող Մաքսիմ Վեռները (կամ Վեռներ-Կրեկչյանը) փորձում է 2012-ի նախագահական ընտրություններից առաջ միավորել բոլոր սերունդներին եւ մանավանդ նրանց, ովքեր իրենց երիտասարդ են համարում: Մաքսիմի մայրը՝ Ֆլորանս Կրեկչյանը, էզրումցի ծնողների զավակ է, հայրը տաքսու վարորդ է: Խանդավառ եւ գործունյա Մաքսիմը քաղաքական հարաբերություններ է ուսանում՝ իր սուղ միջոցներով բնակվելով Փարիզի շրջանի մի փոքրիկ կացարանում:



«Նուվել դ՛Արմենի» ամսագրի կայքը մեջբերում է Մաքսիմի այն կարծիքը, որ «անհրաժեշտ է պետական երիտասարդական քաղաքականություն, այլապես համակարգը կփլուզվի»:

Նախագահության ապագա թեկնածուն չի ձգտում անպայման նախագահ ընտրվել, սակայն հանդես է գալիս որպես երիտասարդների շահերի արտահայտիչ: Նա ծնվել է Բրոն քաղաքում (Ռոնի մարզ): Այս տարի փարիզյան «Մաքս Միլո» հրատարակչությունում լույս է տեսել նրա «89 առաջարկ 2012-ի համար» գիրքը, որը նվիրված է առավելապես երիտասարդությանը հուզող հարցերին, պատգամավոր եւ սենատոր ընտրվելու տարիքն իջեցնելու, վարորդական իրավունք ստանալու խնդիրներին եւ այլն: Նաեւ առաջարկվում է բաց դպրոցներ ստեղծել վարժարաններում՝ ցածր առաջադիմություն ունեցողներին ուսումն ավարտելու հնարավորություն տալու համար, տարեցների եւ երիտասարդների ծառայությունների, հնչյունների փոխանակման միջսերնդային գործակալություն հիմնել, «աշխատանքային գործունեություն սկսողների հետ համերաշխության հիմնադրամ» ստեղծել, որպեսզի ուսումն ավարտած եւ աշխատանք փնտրող երիտասարդները ամսական 400 եվրո նպաստ ստանան»:

Մաքսիմը Ֆրանսիայի երիտասարդների ընկերակցության նախագահն է: Նա առնվազն 500 ստորագրություն պետք է հավաքի, որպեսզի կարողանա իր թեկնածությունն առաջադրել նախագահական ընտրություններում:

Հայոց ցեղասպանության հարցում Մաքսիմը կողմնակից է այն թուրք մտավորականների շարժմանը, որոնք հանդես են գալիս հայ-թուրքական կապերի հաստատման օգտին: Նրա կարծիքով, ցեղասպանության ճանաչումը բխելու է քաղաքացիական հասարակությունից: Erasmus համալսարանական ծրագրի շրջանակներում այս տարվա ապրիլի 24-ին նա Ստամբուլում մասնակցում էր թուրք առաջադեմ գործիչների եւ իրավապաշտպան կազմակերպությունների միջոցառումներին:

Պատրաստեց Պ. Ք.

# SOS. Սադրանք է

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

**1news.az-ը, որ վերահսկում են Ադրբեջանի հատուկ ծառայությունները, «հուշագիր» է դղել Իսրայելի խորհրդարանին: Այն «անհանգստություն է հայտնում կառավարող «Լիկուդ» կուսակցության ներկայացուցիչների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարց բարձրացնելու կապակցությամբ»: Խնդիրն այն չէ, որ ադրբեջանական լրատվամիջոցն «անհանգստացած է», այլ՝ որ նա փորձում է հայ ժողովրդին վերագրել հրեատյացություն եւ «ապացուցում, որ հրեաների հանդեպ հայերը ցեղասպանություն են իրականացրել»: Որպես «հիմք» բերվում են 1918 թ. գարնանը բոլշեւիկյան եւ մուսավաթական ուժերի միջեւ Բաքվի նահանգում տեղի ունեցած զինված բախումները:**

**Թե ինչ է իրականում կատարվել այդ ընթացքում, հայտնի է պատմագիտությանը. մուսավաթական զինված խմբավորումները Բաքվում խռովություն են բարձրացրել, որը եւ ճնշել են բոլշեւիկները: Դա քաղաքացիական կարճատեւ պատերազմ էր, որի ընթացքում զոհվել են տարբեր ազգությունների ներկայացուցիչներ: Այն հանգամանքը, որ Բաքվում բոլշեւիկյան կառավարության ղեկավար է եղել Ստեփան Շահումյանը, թույլ չի տալիս ասել, թե կատարվածի պատասխանատուն հայ ժողովուրդն է: Մանավանդ, պատմագիտական որեւէ չեզոք աղբյուր չի մատնանշել, որ քաղաքացիական բախումների հետեւանքով զոհվել են նաեւ հրեաներ:**

**Այդուհանդերձ, Ադրբեջանի ազգային անվտանգությունից սնվող լրատվամիջոցը հայերին է վերագրում նաեւ Օսմանյան կայսրության հրեա բնակչության «զանգվածային ջարդերը»: Մասնավորապես խոսվում է Էրզրումի հրեաների հանդեպ «հայ ավազակների գործադրած բռնությունների» մասին:**

*Տես էջ 8*

# «Քուրդիստանը մեր երկիրն է, իսկ Դիարբեքիրը՝ նրա մայրաքաղաքը»

## *Այս կարգախոսով են անցել Հաքքյարիում եւ Դիարբեքիրում «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության կազմակերպած հետընտրական հանդիպումները*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Մեջլիսի ընտրություններում վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության հաղթանակը ենթադրելի էր, եւ ոչ ոք չէր կասկածում, որ նա վերստին միանձնյա իշխանության կգա երկրում: Սակայն խնդիրը սոսկ իշխանությունը չէր, այլ գեներալ Էվրենի զինվորական վարչակարգի 1982-ին ընդունած սահմանադրության փոխարինումը քաղաքացիական սահմանադրությամբ եւ քրդական հարցը:



Թեեւ ընտրությունների արդյունքում ստացած 326 պատգամավորական տեղերը բավարար չեն նոր սահմանադրությունը Մեջլիսում անցկացնելուց հետո հանրաքվեի ներկայացնելու համար, սակայն ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցությունն արդեն նոր սահմանադրության հարցում իշխանություններին աջակցելու պատրաստակամություն է հայտնել:

*Տես էջ 5*

# «Գյուղատնտեսական վարկերի վերակառուցումը հնարավոր չէ»

## *Ըստ ԿԲ նախագահի՝ բանկերն առաջարկում են այլ տարբերակներ կարկտահարությունից տուժած համայնքներում*




Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանն ու «Գերմանա-հայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակի տնօրեն Գեւորգ Թումանյանը երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ ներկայացրին հիմնադրամի կողմից տրամադրված վարկային մի շարք ծրագրերի կատարման ընթացքը: ԿԲ նախագահը մասնավորապես անդրադարձավ Ռուսաստանի Դաշնության տրամադրած վարկի եւ գյուղվարկավորման ծրագրի կատարման հարցերին:

Ռուսական վարկի վերաբերյալ **Արթուր Ջավադյանը** տեղեկացրեց, որ, ընդհանուր առմամբ, այդ գումարը կազմել է 66,5 մլրդ դրամ: Բանկերին տրամադրվել է 64 մլրդ դրամ: Այդ գումարից տրամադրվել է 3724 վարկ՝ հիմնականում փոքր եւ միջին ձեռնարկատիրությանը, հիպոթեկային շուկային, արտահանման աջակցմանը, վերամշակող արդյունաբերությանը եւ այլն: ԿԲ նախագահի հավաստմամբ, այդ բոլոր վարկերը ունեն շատ բարձր արդյունավետություն, եւ չաշխատող վարկեր չկան:

Գյուղատնտեսության ֆինանսավորման մասին ԿԲ նախագահն ասաց, որ ապրիլ-մայիս ամիսներին շուրջ 12 հազար գյուղացիական տնտեսությունների տրամադրվել են 7,5 մլրդ դրամի վարկեր, իսկ մեկ վարկի միջին չափը 625 հազար դրամ է: Դրանք այն վարկերն են, որոնց 6-8 տոկոսը սուբսիդավորվում է պետության կողմից: Այս վարկերի մեկ այլ առավելությունն այն է, որ 6 ամիս տոկոսադրույքների մարում չի նախատեսվում: Արթուր Ջավադյանը հայտնեց, որ օգոստոսի վերջին, սեպտեմբերի սկզբին գյուղվարկավորման ծրագիրը կշարունակվի: Տեղեկացվեց նաեւ, որ ներկայումս այս ծրագրին մասնակցում են 4 բանկեր՝ «ԱԿԲԱ կրեդիտ ագրիկոլը», «Արդշինինվեստբանկը», «Պրոկրեդիտը», «Կոնվերսբանկը»:

Ինչ վերաբերում է կարկտահարված համայնքների բնակիչների համար տրամադրված վարկերի վերակառուցմանը, ապա ԿԲ նախագահը դա անհնար համարեց, նշելով, որ դրան դեմ են նաեւ բանկերի հիմնադիրները, աուդիտորական կազմակերպություններն ու միջազգային ֆինանսական կազմակերպությունները: Նա նշեց, որ բանկերը մշտապես աշխատել են վարկառու գյուղացիների հետ տարբեր բնակլիմայական աղետների, հիվանդությունների ժամանակ: Որպես իրավիճակի լուծման ուղի՝ նա առանձնացրեց այն տարբերակը, որի դեպքում գյուղացուն վճարած վարկի դիմաց տալիս են նոր վարկ՝ 1,5 անգամ ավելի երկար ժամկետով եւ ավելի լավ պայմաններով:

### Գնաճը կլինի 4-5,5 տոկոսի մոտ, իսկ դրամը շատ չի ուժեղանա

Խոսելով այս տարվա առաջին 5 ամիսների ֆինանսական ցուցանիշների մասին՝ Արթուր Ջավադյանը հայտնեց, որ ֆինանսական միջնորդության մակարդակը՝ բանկային ակտիվներ-ՀՆԱ հարաբերակցությունը հասել է 50 տոկոսին, այն դեպքում, երբ 90-ականների վերջին այդ ցուցանիշը 13-14 տոկոս էր, իսկ 2008-ին՝ 28 տոկոս: Վարկեր-ՀՆԱ ցուցանիշը հասել է 38 տոկոսի, կապիտալի համարժեքության ցուցանիշը՝ 21 տոկոսի, ընթացիկ իրացվելիության ցուցանիշը՝ 26 տոկոսի, իսկ ռեզիդենտներին տրված վարկերն ավելացել են 17 տոկոսով: Վերջին ցուցանիշի վերաբերյալ ԿԲ նախագահը հայտնեց, որ բավականին բարձր է ԱՊՀ երկրների համանման ցուցանիշից:

Գնաճի վերաբերյալ տրված հարցին Արթուր Ջավադյանը պատասխանեց, որ ամեն ինչ արվել է, որ տարեվերջին գնաճի մակարդակը հասնի ԿԲ նախանշած նպատակային սահմանին՝ 4-5,5 տոկոսի: Ներկայումս գնաճի ցուցանիշը 9 տոկոս է:

Փոխարժեքի վերաբերյալ էլ ԿԲ նախագահը վերստին նշեց, որ վարում են լողացող փոխարժեքի քաղաքականություն եւ միջամտություններ են իրականացնում միայն կտրուկ տատանումների դեպքում: Փաստելով, որ վերջին 10-15 օրերին ճնշումներ են զգացվում դեպի դրամի արժեւորում, Արթուր Ջավադյանն ասաց, որ եթե այդպես շարունակվի, ապա ԿԲ-ն կմիջամտի, որ դրամը շատ չուժեղանա:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Վերնիսաժում, համենայն դեպս, որոշ բարեփոխումներ իրականացվել են

Վերջերս Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանի որոշմամբ հանձնարարվեց լուրջ փոփոխություններ իրականացնել Վերնիսաժի տարածքում: Այդ որոշման հիմքը հանդիսացան քաղաքապետի շրջայցը եւ տեղում տրված հանձնարարականները: Անցել է մեկ ամիս եւ արդեն նկատելի են որոշ փոփոխություններ: «**Ազգ**»-ը երեկ անդրադարձել էր խնդրին եւ հաստատել, որ բարեփոխումներն անբավարար են դեռեւս:

Մեր թերթը երեկ զրուցեց «Վերնիսաժ» ՍՊԸ տնօրենի հիմնադիր **Հարություն Նավասարդյանի** հետ եւ փորձեց ճշտել, թե ինչ աշխատանքներ են կատարվել քաղաքապետի հանձնարարականից հետո: Պրն Նավասարդյանը տեղեկացրեց, որ առաջնահերթության կարգով փոխվել է 5840 քմ տարածքի հատակը, որոշ տեղերում ասֆալտապատվել է, մի մասում էլ՝ բետոնապատվել: Վերացվել են նախկին մոմլաթե կապույտ ծածկերը եւ փոխարենը տեղադրվել միատեսակ, գեղեցիկ ծածկեր ու 120 անձրեւանոցներ, որոնք անձրեւից ու արեւից պաշտպանում են Վերնիսաժի առեւտրային տարածքը 90 տոկոսով:

«Այդ բոլոր աշխատանքները կատարել է «Հ. Նավասարդյան» ՍՊԸ-ն, պատվիրելով «MT Meincom»-ին, աշխատանքների դիմաց վճարելով 18 մլն դրամ: Տեղադրվել են նաեւ երկու ժամանակակից սանհանգույց, ընթացքի մեջ է նաեւ 8 նոր սանհանգույցների կառուցման համար թույլտվության որոշման հարցը, որն այժմ գտնվում է քաղաքապետարանի ճարտարապետական վարչությունում»:

Ինչպես տեղեկացրեց պրն Նավասարդյանը, «Հանրապետություն» մետրոյի կայարանը սնուցող ջրագծից մինչեւ Վերնիսաժ անցկացվել են ոռոգման խողովակներ, սակայն այդքանով հնարավոր չէ ոռոգել ամբողջ տարածքը, ուստի դիմել են քաղաքապետարան՝ մեկ այլ ջրագծից օգտվելու խնդրանքով հատուկ թույլտվություն ստանալու համար:

Առավոտյան ընկերության 10 աշխատակիցները խնամքով ջրում են 200 «տուները», վարդի թփերը, կանաչ տարածքն ու ծառերը: Մինչ այդ, գարնան սկզբին քաղաքապետարանի դենդրոլոգների խորհրդով ու մասնակցությամբ էտվել են տարածքի 120 դեկորատիվ ծառերը: Այդ բոլորից զատ, պրն Նավասարդյանը տեղեկացրեց, որ հաճախ իրեն են դիմում 150-200 քաղաքացիներ ու խնդրում հնարավորություն ստեղծել Վերնիսաժում ամենօրյա առեւտուր իրականացնելու համար: Իսկ ինչ վերաբերում է տարածքի 4 շատրվաններին, տնօրենը տեղեկացրեց, որ արդեն փոփոխություններ են մտցվել դրանց նախագծերում եւ շատրվանների շահագործումը մտցվել է 2012-ի ծրագրում:

Ինչ վերաբերում է «**Ազգում**» նախորդ օրը, հունիսի 14-ին տպագրված «Վերնիսաժը չի բարեկարգվել, մի քիչ կանաչապատվել է» հոդվածին, պրն Նավասարդյանն ասաց. «Հոդվածում նշված որոշ փաստեր չեն համապատասխանում իրականությանը, եւ անգամ այն երկու լուսանկարները, որ զետեղվել են, չեն մտնում Վերնիսաժի տարածքի մեջ, այլ գտնվում են Կառավարության թիվ 3 շենքի դիմաց: Նշեմ նաեւ, որ Վերնիսաժի ե՛ւ աղբահանությունը, ե՛ւ լուսավորությունը իրականացնում են համայնքի համապատասխան կառույցները, այլ ոչ թե ընկերությունը: Իսկ վարձավճարները դեռ տարիներ առաջ սահմանվել են 500-1000 դրամ՝ ընկերության կողմից»:

«**Ազգը**» խոստանում է տեսադաշտում պահել Վերնիսաժի տարածքը ոչ միայն զբոսաշրջիկների համար նրա ունեցած նշանակության, այլեւ այնտեղ իրենց ձեռքի շնորհն ու տաղանդը ցուցադրող վարպետների շահերից ելնելով:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**



## ՀՅԴ-ն Կազանի հանդիպումից լուրջ առաջընթաց չի ակնկալում

Կազանում Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ հանդիպումից Հայ հեղափոխական դաշնակցությունը ակնկալում է միայն դրական եզրակացություն:

«Կողմերը կասեն, որ լավ է, բայց լուրջ առաջընթաց չի լինի», համոզված է ՀՅԴ Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի ղեկավար **Կիրո Մանոյանը**:

«Հանդիպմանը դրական եզրակացությամբ հայտարարությունը 2 կողմի համար էլ հաջողություն կլինի: Եթե հայտարարեն, որ բանակցությունները տապալվել են, ապա ռազմական ընդհարումների վերսկսումը կողմերի համար վատ կլինի»:

Ներկայացնելով Արցախի հասարակական կարծիքը, որ հակադրվում է ներկայիս քաղաքական զարգացումներին, Մանոյանը քաղաքական գործիչներին ու դիվանագետներին հիշեցրեց, որ ընդունված որոշումները առաջին հերթին պետք է ընդունելի լինեն Արցախի համար: Ինչ վերաբերում է Արցախի «միջանկյալ կարգավիճակ» ստանալուն, ապա դա ավելի ցածր է, քան Արցախի ներկայիս կարգավիճակը:

Անդրադառնալով Թուրքիայում խորհրդարանական ընտրություններին՝ Մանոյանն ասաց, որ դրանք որեւէ փոփոխություն չեն մտցնի հայ-թուրքական հաշտեցման գործընթացում:

«Ընտրությունների ժամանակ շահող կուսակցությունն ասաց, որ ոչինչ չի փոխվի: Այսինքն՝ մինչեւ Ղարաբաղի հարցը, իրենց ասելով, չկարգավորվի, հայ-թուրքական հարաբերություններ չեն ստեղծվի»:

Դաշնակցական գործիչը ուշադրություն հրավիրեց Թուրքիայում ընտրությունների ընթացքին եւ հաստատեց այն փաստին, որ քվեարկությանը մասնակցել է 50 միլիոն մարդ:

«6-7 ժամ անց արդյունքները հրապարակվել էին եւ չէին վիճարկվում քաղաքական ուժերի կողմից: Սա իրենց համար դրական կետ է, մեզ համար՝ ուսանելի»: Հ. Հ.

## Արարատ Զուրաբյանն ընդհանրապես լքում է ՀՀՇ-ն

ՀՀՇ վարչության նախկին նախագահ Արարատ Զուրաբյանը լքում է ՀՀՇ վարչությունը եւ ՀՀՇ-ն ընդհանրապես եւ մոտ օրերս մամուլի ասուլիսով տեղեկացնելու է այս մասին: «Ազատ դեմոկրատներ» նոր լիբերալ կուսակցության ձեւավորման ֆոնին՝ ՀՀՇ վարչության այլ անդամների եւ շարքային անդամների՝ ՀՀՇ-ն լքելու վերաբերյալ լուրեր նույնպես կան: Նոր կուսակցությունը, որի գլխին իր ձեռքն էր դրել դեսպան Յովանովիչը՝ այցելելով կուսակցություն, երեւի կհամալրեն Ալիկ Արզումանյանը, Կարապետ Ռուբինյանը եւ այլ նախկին կարկառուն ՀՀՇ-ականներ: Մ. Խ.

## Բաբուխանյանն ընդդեմ Report.am-ի

ԱԻՄ նախագահ Հայկ Բաբուխանյանը դատի է տվել Report.am կայքին ու լրագրող, վերլուծաբան Էդիկ Անդրեասյանին: Այս մասին «**Ազգին**» արդեն գրել է: Report.am-ից տեղեկացանք, որ հուլիսի 1-ին Երեւանի Կենտրոն ու Նորք-Մարաշ համայնքների վարչական դատարանում տեղի կունենա դատական նիստը: Հիշեցնենք, որ կայքին դատի տալու պատճառը Report.am-ում հրապարակված ««Իրավունքի» իրավունքը Հայկ Բաբուխանյանի սրի ծայրին է» հոդվածն է: Հայկ Բաբուխանյանը վիրավորական է համարում իր հասցեին հրապարակված մի շարք արտահայտություններ, իսկ «կուսակցություն քանդելու» մեղադրանքը համարում է զրպարտություն: Բացի հերքումից ու հրապարակային ներողությունից՝ Հայկ Բաբուխանյանը լրատվամիջոցից ու հոդվածագրից պահանջում է նաեւ 3-միլիոնական դրամ: Ի դեպ, ԱԻՄ նախագահն առաջին անգամը չէ, որ դատի է տալիս Report.am-ին. նա կայքին դատի է տվել նաեւ Էդիկ Անդրեասյանի «Երբ զոռով հուշում են անհուշելին» հոդվածի ու դրա վերաբերյալ ընթերցողներից ստացված արձագանքների համար: Այս գործով դատական նիստն էլ կկայանա այսօր: Ի. Պ.

## Ավազակին վնասազերծեցին

Երեկ՝ կեսօրին Երեւանի Եղբայրության փողոցի 16 շենքի բնակարաններից մեկում անհայտ անձը ներկայացել է որպես ջրմուղի աշխատակից եւ փորձել է մտնել բնակարաններ: Սակայն տանտերերը, կասկածելով՝ զանգահարել են ոստիկանություն: Վերջիններս ահազանգի հետքերով հետապնդել են ավազակային հարձակում կատարելու մեջ կասկածվող անձին եւ «Գարեգին Նժդեհ» մետրոյի կայարանի տարածքում փորձել են նրան բռնել: Հետապնդվողը 31-ամյա Արման Ենգիբարյանն է, որն արդեն իսկ մայրաքաղաքի մի շարք թաղամասերում ավազակային հարձակումներ կատարելու մեջ է կասկածվում, չի ենթարկվել ոստիկանների պահանջներին եւ իր մոտ եղած զենքից կրակ է արձակել: Ոստիկանները նախազգուշական օդ կրակոց արձակելուց հետո վնասազերծել են հետապնդվողին ու նրան տեղափոխել «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղ եւ ստացած վերք(եր)ից մահացել է: Մ. Մ.

## «Արարատբանկը» ստացավ Diners Club-ի մասնակցության թույլտվություն

Ինչպես տեղեկացանք «Արարատբանկի» լրատվական բաժնից, բանկը ՀՀ Կենտրոնական բանկից ստացավ «Դայնրզ քլաբ ինթերնեշնլ» (Diners Club) միջազգային վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն:

Հաղորդագրության մեջ տեղեկացվում է, որ Diners Club-ի հետ կնքված պայմանագրով, «Արարատբանկը» այս հեղինակավոր կազմակերպության բացառիկ ներկայացուցիչ է Հայաստանում՝ հնարավորություն ստանալով սպասարկելու Diners Club-ի՝ ճանաչված համաշխարհային ապրանքանիշի պլաստիկ քարտերից եւ էլեկտրոնային վճարման անենատարբեր ծառայություններից օգտվող քարտապաններին:

Diners Club-ը հիմնադրվել է 1950 թվականին, բարձրակարգ ֆինանսական ծառայություններ է մատուցում աշխարհի ավելի քան 185 երկրներում, շուրջ 675000 բանկոմատների եւ կանխիկացման կետերի միջոցով: Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Անցուդարձ

# ԼՂՀ նախագահն ասում է, ադրբեջանցի քաղաքագետը՝ հաստատում

Հունիսի 25-ին Կազանում կայանալիք Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների մոտալուտ հանդիպման ֆոնին, այս օրերին միջազգային, առավելապես ռուսական մամուլը լայնորեն քննարկում է ԼՂ հիմնահարցը, լսելով այդ թվում հիմնական՝ ղարաբաղյան կողմի տեսակետները: Հիշեցնենք՝ նախ «Էխո Մոսկվի» հայտնի ռադիոկայանի խմբագրի տեղակալը եկավ Ստեփանակերտ ու զրուցեց ԼՂՀ ղեկավարության հետ, ինչի համար Բաքուն վերջինիս «անցանկալի անձ» ճանաչեց, գործում ներքաշեց նաեւ Ադրբեջանում ՌԴ դեսպան Դորոխինին, ինչն ի վերջո հանգեցրեց ռուս-ադրբեջանական՝ հետաքրքրական շարունակություն ապահովող «թեթեւ» դիվանագիտական սկանդալի: Նշենք միայն, որ ՌԴ լիբերալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ Վլադիմիր Ժիրինովսկին անձամբ նամակով դիմել է արտգործնախարար Լավրովին՝ «կարգի հրավիրելու Բաքվում ՌԴ դեսպանին՝ այն բանի համար, որ նա չի պաշտպանել իր ներկայացրած երկրի քաղաքացու շահերը այն երկրում, որտեղ իրականացնում է դիվանագիտական ծառայությունը»: Օրեր առաջ «Մոսկովսկիե նովոստի» պարբերականը հարցազրույց ունեցավ նախագահ Սերժ Սարգսյանի հետ, հիմքում կրկին՝ ԼՂ հիմնահարցը: Այժմ էլ ռուսական «Վոեննի դիպլոմատ» պարբերականի հարցերին պատասխանել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը:

Խոսելով սահմանում տիրող իրավիճակից՝ նախագահ **Սահակյանը** նշել է. «Ադրբեջանական կողմը պարբերաբար խախտում է հրադադարի ռեժիմը: Չնայած վերջին ժամանակներում այդ խախտումները ավելի հաճախակի են դարձել, սակայն չեն կարող փոխել ուժերի գործող բալանսը կամ կոտրել մեր ժողովրդի եւ բանակի ոգին: Այդ գործողություններով Ադրբեջանն ընդամենը ուժեղացնում է անվստահությունն իր հանդեպ, խոչընդոտում խաղաղ կարգավորման գործընթացին: Փոխարենը մենք պարբերաբար հանդես ենք գալիս վստահությունն ամրապնդող առաջարկություններով, օրինակ, առաջարկում ենք, շփման գծից հետ քաշել դիպուկահարներին: Ադրբեջանական կողմը, սակայն, նենգափոխում է մեր բոլոր առաջարկությունները, որքան էլ դրանք կառուցողական լինեն»: Բակո Սահակյանը ընդգծել է, որ «Ադրբեջանի ռազմական հռետորաբանության եւ քաղաքականություն դարձած հայատյացության պայմաններում» ղարաբաղյան կողմը միշտ պատրաստ է պատերազմի, որն, անշուշտ, հղի է խիստ վտանգավոր հանգամանքներով ողջ Հարավային Կովկասի համար. «Անցնելով պատերազմի միջով՝ մենք առավել գնահատում ենք խաղաղությունը», շեշտել է ԼՂՀ նախագահը:

Նախագահ Սահակյանը «սպեկուլյացիա» է որակել ադրբեջանցի քաղաքական գործիչների այն թեզը, թե Բաքուն պատրաստ է Ստեփանակերտին տալ ինքնավարության բարձր կարգավիճակ Ադրբեջանի կազմում. «Ոչ մի բարձր ինքնավարության մասին Ադրբեջանի կազմում խոսք լինել չի կարող: Ադրբեջանի հետ հակամարտությունը հնարավոր է լուծել միայն մեկ տարբերակով՝ միջազգային մակարդակով ԼՂՀ-ի ճանաչում: Սա մեր հանրապետության եւ ժողովրդի եւ իշխանության կարծիքն է, իսկ անցյալին վերադարձ չկա, եւ, կարծում եմ, դա բոլորի համար էլ պարզ է», նկատել է Բակո Սահակյանը: Այս վերջին հանգամանքը պարզ է նաեւ Ադրբեջանում: Այսպես՝ իր հայացքներում բավական հասկանալի՝ քաղաքագետ Զարդուշտ Ալիզադեն bizim-dovr.az կայքին հայտնել է. «Մենք պետք է սառնասիրտ գտնվենք, քանի որ Ղարաբաղը հետ չենք վերադարձնելու: Ադրբեջանի ռեսուրսներն այնպիսին չեն, որ օգտվելով անկախ պետության կարգավիճակից, կարողանա վերականգնել իր տարածքային ամբողջականությունը: Այս հակամարտությունը կշարունակվի եւս 20 տարի: Նավթն ու գազը կվերջանան, հետո կտեսնենք», նշել է Ալիզադեն: Իսկ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, ռուսական պարբերականի հետ զրույցում ընդգծելով խաղաղ բանակցությունների ղարաբաղյան կողմի մասնակցության կարեւորության մասին, նշել է. «Կարծում եմ, որ ոչ լիարժեք բանակցային ձեւաչափը (նկատի ունի՝ առանց ԼՂՀ-ի մասնակցության- Հ.Ա.) չի կարող բերել ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության վերջնական հանգուցալուծմանը: Առաջին հերթին անհրաժեշտ է վերականգնել բանակցությունների լիարժեք ձեւաչափը, որտեղ Լեռնային Ղարաբաղը մասնակցություն կունենա որպես լիիրավ կողմ»:

Անշուշտ՝ Բաքուն պետք է պատրաստ լինի Ստեփանակերտի հետ ուղիղ շփման գնալու, քանի որ, նախ՝ անհնար է որեւէ տեսակի խաղաղապահ ներկայացնել հակամարտության գոտում՝ դե ֆակտո ԼՂՀ-ում, առանց Ստեփանակերտի գրավոր համաձայնության, իսկ այս վերջինը հնարավոր կլինի, երբ, թեկուզ ժամանակավոր, բայց միջազգայնորեն կճանաչվի ԼՂ-ի կարգավիճակը, որն, ինչպես արդեն բարձրաձայնում են, չի կարող ավելի նվազ լինել ներկա կարգավիճակից: Այդ ժամանակ գոնե Բաքուն այլընտրանք չի ունենա ուղիղ բանակցելու միջազգայնորեն-ժամանակավոր ճանաչված Ստեփանակերտի հետ, եթե, իհարկե, ուզում է իրոք լուծել հակամարտությունը, ինչը, դատելով հունիսի 11-ին Մոսկվայում կայացած արտգործնախարարների հանդիպման երկկողմ պաշտոնական դրական արձագանքներից, պետք է որ հենց այդպես էլ լինի:

Հ. ԱՓՅԱՆ

# Տարածաշրջանային խորհրդարանական համաժողով Ազգային ժողովում

Հունիսի 14-ին ժամը 11.30-ին ՀՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճում աշխատանքը սկսեց ՀՀ Ազգային ժողովի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) եւ Միջխորհրդարանական միության կազմակերպած «Իրականություն դարձնել ամենախոցելի երեխաների իրավունքները» թեմայով տարածաշրջանային խորհրդարանական եռօրյա համաժողովը, որին մասնակցում են տարբեր երկրներ եւ միջազգային կազմակերպություններ ներկայացնող ավելի քան 100 պատվիրակներ:

Մ. Խ.

## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏ

# «Հայկական փոխադրողները զրկված են Թուրքիայի տարածքով փոխադրումներ իրականացնելու հնարավորությունից»

## *Նշեց տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը*

**Ավտոտրանսպորտի միջազգային միության՝ (IRU) Եվրասիայի երկրների հետ կապի կոմիտեի նիստը երեկ բացվեց Երեւանում:**

**Հանդես գալով բացման խոսքով, Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը նախ կարեւորեց Միջազգային ավտոմոբիլային միության դերն ու նշանակությունը ավտոտրանսպորտային ծառայությունների որակի բարձրացման գործում, նշելով, որ այն մեծապես նպաստում է ավտոմոբիլային տրանսպորտի զարգացմանը: Այնուհետեւ նախարարը նշեց, որ տրանսպորտի բնագավառում Հայաստանի կառավարությունը ձգտում է միջազգային ավտոմոբիլային փոխադրումների համար առավել հարմարավետ պայմաններ ապահովել: Նա ընդգծեց, որ մեր երկրի տրանսպորտային օրենսդրությունը համարվում է Եվրասիական տարածաշրջանում ամենաազատականացված օրենսդրություններից մեկը, ավելացնելով, որ Հայաստանի կառավարությունը որոշում է կայացրել ոլորտի զարգացման նկատառումով առայժմ չլիցենզավորել ավտոմոբիլային բեռնափոխադրումների բնագավառը: Ըստ Մանուկ Վարդանյանի՝ օտարերկրյա փոխադրողների համար նույնպես նախատեսված են պարզեցված գործընթացներ՝ մասնավորապես օտարերկրյա ավտոմեքենաների մուտքը Հայաստանի Հանրապետություն չի պահանջում մուտքի եւ տարանցման թույլտվություններ, իսկ սահմանի վրա իրականացվում է մուտքի արտոնագրերի պարզեցված տրամադրում:**



**«Չնայած դրան, այսօր հայկական փոխադրողները նույնիսկ ՏՆԵԿ եւ ԱԾՏՀ թույլտվությունների եւ ՏԻՐ գրքույկների առկայության դեպքում զրկված են հարեւան Թուրքիայի տարածքով երկկողմ եւ տարանցիկ փոխադրումներ իրականացնելու հնարավորությունից, որի մասին բազմիցս տեղեկացվել են մի շարք միջազգային կազմակերպություններ, այդ թվում նաեւ Միջազգային ավտոմոբիլային միությունը», շեշտեց տրանսպորտի եւ կապի նախարարը:**

**Մանուկ Վարդանյանը անդրադարձավ նաեւ ավտոմոբիլային ճանապարհների բարեկարգմանը եւ նոր ճանապարհների կառուցմանը, առանձնացնելով «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու շինարարության նախագիծը, որի ընթացքում առաջին անգամ Հայաստանում նախագծային փուլում իրականացվել է ճանապարհների երթեւեկության անվտանգության աուդիտ: Նախարարը կարեւորեց նաեւ Հայաստանի Հանրապետությունը վրացական սեւծովյան նավահանգիստների հետ կապող հիմնական երեք ուղղությունների բարեկարգումը եւ ճանապարհների դասի բարձրացումը, հաշվի առնելով Հայաստանի բարձրլեռնային ռելիեֆը:**

**Ավտոտրանսպորտի միջազգային միության գլխավոր քարտուղար Մարտին Մարմին իր ելույթում նշեց, որ միության նպատակն է Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարարի հետ համատեղ աշխատել, նպաստել ավտոտրանսպորտի զարգացմանը եւ սահմանների երկու կողմում էլ իրականացնել նույն ընթացակարգերը: «Մեր նպատակն է այս տարածաշրջանում ներդնել նույն ընթացակարգերը, որոնք մինչ այժմ կիրառել ենք աշխարհի այլ երկրներում», ասաց նա:**

**Նիստի շրջանակներում Մանուկ Վարդանյանը եւ Մարտին Մարմին ստորագրեցին «Հայաստանի Հանրապետության տարածքով Ասիայի, Եվրոպայի եւ հիմնական համաշխարհային շուկաների միջեւ ավտոտրանսպորտային փոխադրումների զարգացման մասին» փոխըմբռնման հուշագիրը:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն է իր ճակատագրի տերը

*1-ին էջից*

**Իսկ թե որ փուլում է նախատեսվում Լեռնային Ղարաբաղի ներգրավումը բանակցային գործընթացում, Նալբանդյանն ընդգծել է, որ երկրորդ փուլում նախատեսվում է մշակել, պատրաստել կարգավորման պայմանագիրը, ինչին միաժամանակ Լեռնային Ղարաբաղը պետք է մասնակից լինի: «Մեզ համար խաղաղ կարգավորման հիմնաքարը այն է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն է իր ճակատագրի տերը»:**

**Ինչ վերաբերում է գալիք Կազանի հանդիպմանը, Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը հիշեցրել է ԱԳՆ հաղորդագրությունը Մոսկվայում կայացած նախարարների մակարդակով եռակողմ հանդիպումից հետո, որտեղ ասվում էր, որ կողմերին հաջողվել է մոտեցնել դիրքորոշումները մի շարք առանցքային հարցերի շուրջը, եւ եթե այդ դրական միտումը պահպանվի նաեւ Կազանում, ապա հնարավոր կլինի դրական առաջընթաց արձանագրել:**

**Շվեդիայի արտգործնախարարն արձագանքել է Դովիլից հետո էլ հնչող ռազմատենչ հայտարարությունների առնչությամբ հարցին, ընդգծելով այն, ինչ արդեն ամեն մի պաշտոնյա ասում է իր խոսքի սկզբում ու վերջում. «Հակամարտության խաղաղ կարգավորումը այլընտրանք չունի: Կարգավորումը փոխզիջում է պահանջում, որին պետք է հասնել խաղաղ բանակցություններով», ասել է Բիլդտը, ավելացնելով, որ պետք է իջեցնել հակամարտության գոտում տիրող լարվածությունը բոլոր հնարավոր միջոցներով:**

**Նալբանդյանը նույն հարցի կապակցությամբ հավելել է, որ տարբեր ադրբեջանական պաշտոնյաների կողմից խաղաղ կարգավորման վերջին շանսի մասին խոսակցությունները հարց են առաջացնում. «Ո՞վ է խանգարում ադրբեջանցիներին օգտագործել այս շանսը: Իսկ ռազմատենչ հայտարարությունների վերաբերյալ կարող եմ հիշեցնել, որ դովիլյան հայտարարության մեջ հստակ կոչ է արվում պատրաստել ժողովուրդներին խաղաղությանը, հակառակը կդատապարտվի միջազգային հանրության կողմից: Սա ասվում է Ռուսաստանի, Միացյալ Նահանգների եւ Ֆրանսիայի նախագահների հայտարարության մեջ»:**

**Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը, իր հերթին, հունիսի 13-ին Բաքվում ընդունելով իր շվեդ գործընկեր Կարլ Բիլդտին, համատեղ ասուլիսում հայտարարել է, թե Մոսկվայի վերջին հանդիպմանը բանակցություններում «առաջընթաց է գրանցվել որոշ չհամաձայնեցված հարցերի առնչությամբ»:**

**Ադրբեջանական լրատվամիջոցները տեղեկացնում են, որ, Մամեդյարովի ներկայացմամբ, Մոսկվայում խոր քննարկում է տեղի ունեցել: «Առավել քան երեք ժամ տեւած հանդիպմանը արծարծվել են չհամաձայնեցված հարցերը: Դրանցից որոշների առումով հաջողվեց առաջխաղացման հասնել, իսկ որոշները բաց են մնում», ասել է Մամեդյարովը:**

**Հունիսի 11-ին Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների քննարկման ընթացքում, ըստ Հայաստանի ԱԳՆ հաղորդագրության, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքների մի շարք առանցքային հարցերում հաջողվել է «մոտեցնել դիրքորոշումները»: Հիշյալ փաստաթղթի նախագիծը, ըստ պաշտոնական հայտարարության, կքննարկվի հունիսի վերջին կայանալիք հերթական եռակողմ գագաթաժողովի ժամանակ:**

**Ամեն դեպքում, դեռեւս առանց համաձայնության մնացած կետերի առնչությամբ, Մամեդյարովի ներկայացմամբ, պայմանավորվածություն է ձեռք բերվել քննարկելու դրանք Կազանում կայանալիք նախագահական հանդիպմանը: Մամեդյարովը դրական է թողել Մոսկվայի հանդիպման ավարտի մասին իր պատկերացումը. «Սպասենք Կազանում նախագահների հանդիպման արդյունքներին: Հավանական է, որ այդ հանդիպումը, ինչպես եւ նախորդը Սոչիում, մեծապես կաջակցի, որ կայունություն գա տարածաշրջան»:**

**Այս ամենի ֆոնին Ադրբեջանի նախագահի նստավայրից էլ հասցնում են հանրությանը, որ, իրենց սազական՝ Հայաստանի «ապակառուցողական կեցվածքի» կողքին, Ադրբեջանն, ամեն դեպքում, գտնում է, որ ղարաբաղյան հարցում «լուրջ առաջընթացի» ժամանակը եկել է:**

**Հիշեցնենք, որ հունիսի 25-ին Կազանում տեղի ունենալիք նախագահական մակարդակով Հայաստան-Ռուսաստան-Ադրբեջան հանդիպումից ակնկալիքների առումով ընդհանրական է կարծես ինչ-որ փաստաթղթի ստորագրման հեռանկարը, թեեւ փաստաթղթի որպիսությունն ավելի շատ բնորոշումների, քան բնութագրումների դաշտից է:**

**Այդուհանդերձ, Կազանի հանդիպմանն ընդառաջ գնալով առավել ինտենսիվ ու հետաքրքրական են դառնում հայտարարությունները ու դրանց ենթատեքստերը, իսկ առավելապես՝ այն հանգստությունը կամ առերեւույթ հանգստությունը, որով փորձում են բանակցային կողմերն ու համանախագահող երկրների բարձրաստիճան պաշտոնյաները ներկայացնել տեղի ունենալիքը:**

ԱԶԳ

## Նարկոբիզնես

# Ադրբեջան. թմրամիջոցների տարանցիկ գոտի, որտեղ թմրանյութերը նաեւ աճեցվում եւ արտադրվում են

Ադրբեջանում թմրամոլությունը վերածվել է աղետի, որը վտանգում է անգամ այդ երկրի ազգային անվտանգությունը: Ընդ որում, եթե նախկինում հիմնահարցը չէր բարձրաձայնվում, ապա, այժմ, երբ այս թեմայի շուրջն ի հայտ եկան տարբեր միջազգային կազմակերպությունների համապատասխան զեկույցները, խնդիրը թաքցնելը դարձավ անհնարին:

Ադրբեջանի Թմրաբանության հանրապետական կենտրոնի բաժնի վարիչ **Աֆես Մամեդովը** նշում է, որ երկրում թմրամիջոցներից կախման մեջ գտնվող մարդկանց թիվը տարեցտարի աճում է: Մարդիկ սկսում են թմրամիջոցներ օգտագործել արդեն 12-13 տարեկան հասակից: ԱՄՆ պետքարտուղարության տվյալներով՝ Ադրբեջանում թմրամոլների թիվը գերազանցում է 300 հազարը, նրանց 30-35 տոկոսը՝ ուսանողներ: Հարեւան երկրում չկա թմրամիջոցների օգտագործման դեմ մշակված քարոզչություն, թմրամոլների համար գոյություն չունեն վերականգնողական կենտրոններ: Իսկ դպրոցականները, որոնք բավարար գումար չունեն ավելի լուրջ ու թանկարժեք «դոզաների» համար, օգտագործում են էժանագին թմրամիջոցներ:

Ադրբեջանում աճել է նաեւ կին թմրամոլների թիվը: Չնայած վերջիններիս պաշտոնական թիվ նշվում է 500-ը, սակայն սա ընդամենը իրական թվի 10-15 տոկոսն է: Բնականաբար, հարեւան երկրում թմրամոլների թվի պաշտոնական վիճակագրությունը դեռեւս չի արտացոլում իրական պատկերը: Օրինակ՝ առողջապահության նախարարության տվյալներով՝ երկրում թմրամոլների թիվը հասել է 24 հազարի, մյուս կողմից, հետաքրքրական է, նույն տվյալներով՝ երկրի իրավապահ մարմինները առգրավել են 2,5 տոննա թմրամիջոցներ՝ տարբեր տեսակների: Այս ամենից առաջանում է բավական տրամաբանական հարց. ինչպե՞ս են 24 հազար ադրբեջանցիները տարեկան օգտագործում 2,5 տոննա թմրամիջոցներ:

ԱՄՆ պետքարտուղարության՝ «Թմրամիջոցների տարածման վերահսկողության միջազգային ռազմավարություն-2010» զեկույցում ընդգծվում է, որ Ադրբեջանը թմրամիջոցների տարածման համար տարանցիկ երկիր է, որտեղով թմրամիջոցները Աֆղանստանից, Կենտրոնական Ասիայից, Իրանից մտնում են Ռուսաստան եւ Եվրոպա: Նույն զեկույցում նշվում է նաեւ, որ Ադրբեջանում աճել է թմրամոլների թիվը, իսկ ադրբեջանցի թմրամոլների շրջանում «առավել մեծ պահանջարկ» ունեն հերոինն ու թմրանյութ պարունակող աճեցված բույսերը:

Միջազգային փորձագետները ՄԱԿ-ի՝ Թմրամիջոցների դեմ պայքարի վերաբերյալ հրապարակած ամենամյա զեկույցներում համակարծիք են, որ «այնպիսի կոռումպացված երկրում, ինչպիսին Ադրբեջանն է, թմրամոլության դեմ պայքարը անիմաստ է դառնում»: Համաձայն ՄԱԿ-ի համապատասխան զեկույցի՝ Աֆղանստանից Եվրոպա թմրամիջոցների տարանցման «Բալկանյան ճանապարհը» հենց անցնում է Ադրբեջանի տարածքով: Թմրամիջոցները, փաստորեն, անարգել փոխադրվում են Իրան-Ադրբեջան-Թուրքիա ճանապարհով: Իրանի, Ադրբեջանի, Վրաստանի տարածքներով եւ Սեւ ծովով դեպի Բուլղարիա փոխադրվում է Աֆղանստանից եկած թմրամիջոցների «տարեկան չափաբաժնի» 7 տոկոսը:

Երկրորդ «թմրաճանապարհը»՝ «Հին բալկանյանը», ուղղակիորեն անցնում է Իրանից Թուրքիա: Այստեղ հանցավորությամբ զբաղվող անձինք, որպես կանոն, օժանդակվում են Իրանի հյուսիսի քուրդ եւ ադրբեջանցի բնակչության կողմից: Այսպես՝ ամեն տարի այս ճանապարհով թուրքական Հաքքարի եւ Վան փոխադրվում է 95 տոննա հերոին:



Թմրամիջոցների փոխադրման երրորդ ճանապարհը սկսվում է Թուրքմենստանի Թուրքմենբաշու անվան նավահանգստից եւ Կասպից ծովով հասնում մինչեւ Բաքու, այնտեղից էլ՝ Ռուսաստան: Այս փաստը հաստատում է ՌԴ Թմրամիջոցների շրջանառության վերահսկման դաշնային ծառայության տնօրեն **Վիկտոր Իվանովը**, որը Եսսենտուկիում կայացած միջգերատեսչական խորհրդակցության ժամանակ բացեիբաց հայտարեց, որ թմրավաճառներն օգտագործում են Ադրբեջանի տարածքը՝ իրենց ապրանքը Ռուսաստան մտցնելու համար: ՌԴ Անվտանգության դաշնային վարչության սահմանային ծառայության ղեկավարի տեղակալ, գեներալ-լեյտենանտ **Վյաչեսլավ Դորոխինը** ընդգծել է, որ Ադրբեջանը թմրամիջոցների տարանցման հարցում «երկրորդ ակտիվ երկիրն է»: Այս համատեքստում՝ հասկանալի է, որ ՄԱԿ-ի՝ թմրամիջոցների դեմ պայքարի վարչության Ադրբեջանում գործող ներկայացուցիչները կարծում են, որ Ռուսաստանում գոյություն ունեցող նարկոմաֆիան էականորեն ղեկավարում են էթնիկ ադրբեջանցիները: Այս մասին, ի դեպ, վկայություններ կան նաեւ Ադրբեջանում ԱՄՆ դեսպան **Էնն Դերսիի**՝ ժամանակին պետքարտուղարություն ուղարկված հեռագրում, որը հրապարակել է Wikileaks-ը:

2010-ի սեպտեմբերին Ադրբեջանի գլխավոր դատախազի տեղակալ **Ռուստամ Ուսուբովը** հայտարարեց, որ Աֆղանստանից եկած թմրամիջոցների 35 տոկոսը անցնում է Ադրբեջանի տարածքով: Սա դեռ բավական չէ՝ իշխող կուսակցությունից՝ «Ենի Ազարբայջանից», պատգամավոր **Աիադ Աբիեւը** հանդես եկավ սենսացիոն հայտարարությամբ, որ «այսօր Ադրբեջանի տարածքով թմրամիջոցներն անցնում են մեծ ֆուրերով, որոնք պատկանում են մեծահարուստ գործարարներին»: Այս գործարարները զբաղվում են «տարանցիկ բիզնեսով». նրանք ունեն միջազգային չափանիշներին համապատասխան կազմակերպության հստակ կարգավիճակ, արտոնագիր եւ «անձեռնմխելիության իրավունք»:

Անցյալ տարի Ադրբեջանի Լենքորանի շրջանում տեղի ունեցավ տեղի բնակիչների բախում ոստիկանների հետ: Ձերբակալվեցին ավելի քան 30 հոգի, շրջանում հայտարարվեց արտակարգ դրություն: Ըստ տեղեկությունների՝ իրավիճակը սրել են նարկոբարոնները, որոնք օգտագործում են Լենքորանի շրջանը՝ որպես թմրամիջոցների տարանցիկ գոտի:

Ադրբեջանցի նարկոբարոնները, ունենալով լայն կապեր Իրանում, տեղի բնակիչների շրջանում պարբերաբար օգտագործում են իրանամետ տրամադրությունների բարձրացման գործոնը կրոնական հողի վրա, որպեսզի ոստիկանության ուշադրությունը շեղեն բուն խնդրից՝ թմրամիջոցների տարանցումից: Դեռեւս 90-ականներին գոյություն ունեցող թմրամիջոցների տարանցիկ գոտիները՝ Իրան-Նախիջեւան-Թուրքիա եւ Իրան-Աստարա-Դաղստան, կրկին ակտիվացել են: Սկզբում այս ճանապարհները դեռեւս օգտագործվում էին «անկանոն», սակայն այժմ դրանք ստացել են «միջազգային կարգավիճակ»: Ավելի համակարգված աշխատանքի համար այս ճանապարհները վերահսկում են Ադրբեջանի պետական որոշ պաշտոնյաներ: Ի դեպ, 90-ականներին Ադրբեջանի վարչապետ Սուրաթ Հուսեյնովի մականուններից մեկը «նարկոբարոն» էր...:

Ադրբեջանական լրատվամիջոցներն արդեն տեղեկացրել են, որ Թուրքիայում ձերբակալվել է գործարար Մուստաֆա Մազլումը, որը Ադրբեջանում ունի հերոինի արտադրման գործարան: Թուրքական մամուլը հայտնաբերել էր, որ Մուստաֆա Մազլումը նույն ինքը՝ ազգությամբ քուրդ Հուսեյին Բայբաշն է, որը թմրաբիզնեսի շրջանակներում առավել հայտնի է որպես «Եվրոպայի էսկոբար»: Սա նշանակում է, որ բավական չէ այն, որ Ադրբեջանում կան եւ գործում են կոնկրետ հերոինի արտադրամասեր, գործարաններ, նաեւ Ադրբեջանի իրավապահ մարմինները գիտեն դրանց գոյության մասին, սակայն ոչ մի հակաքայլ չեն ձեռնարկում:

Այս համապատկերում ամենեւին էլ պատահական չի թվում, որ Սումգայիթի եւ Քյուրդեմիրի շրջանների ոստիկանության պետ Մեհտի Գումբատովը նշանակվեց Բաքվի ոստիկանության քրեական հետաքննության բաժնի պետ, չնայած իր նախկին պաշտոնից ազատվել էր եւ ձերբակալվել Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարության աշխատակիցների կողմից՝ Թարթառի շրջանի ոստիկանության պետ լիազոր Զաքիլ Իսմայիլովի սպանությունը պատվիրելու համար: Իսկ սպանությունը պատվիրվել էր, քանի որ Իսմայիլովը Գումբատովի բնակավայրում՝ Ջամիլի գյուղում հայտնաբերել էր թմրանյութերի աճեցման պլանտացիա: Սումգայիթի ոստիկանության պետի պաշտոնից Գումբատովին ազատել են այն պատճառով, որ քաղաքում զգալիորեն ավելացել էին թմրամոլների ու թմրամիջոցների տարածման դեպքերը: Բացի սրանից՝ «տեղի ոստիկանությունը որեւէ կերպ պայքար չի ձեռնարկել այս չարիքի դեմ»: Այժմ այս անձը՝ Մեհտի Գումբատովը, Բաքվի քրեական հետաքննության բաժնի պետն է...

Հատկանշական է նաեւ, որ դեռեւս 2002-ին նախագահ Հեյդար Ալիեւը մեղադրեց Սումգայիթի գործադիր իշխանության ղեկավար Թավաքյուլ Մամեդովին՝ թմրակախվածություն ունենալու մեջ: Իսկ սրանից երկու տարի անց Գոբուստանի դատախազի աշխատասենյակում հայտնաբերվեցին թմրամիջոցներ: Այս եւ մի շարք այլ իրադարձությունները հիմք են տվել ադրբեջանցի փորձագետներին վկայելու, որ երկրում բազմաթիվ մանր եւ խոշոր պաշտոնյաներ օգտագործում են թմրամիջոցներ, իսկ ավելի շատ ու ավելի հաճախ՝ նրանց զավակները: Ի դեպ, թմրամիջոցների ապօրինի շրջանառություն իրականացնելու մեղադրանքով անցյալ տարի Ադրբեջանում դատեցին Բաքվի նախկին դատախազ Ադալատ Միրսալամլիի եւ Ազիզբեկովի շրջանի դատախազ Ռաշիդ Հասանովի որդիներին: Սա ավելի շատ ցուցադրական դատավարություն էր, քանի որ ստվերում մնացին շատ ավելի մեծ հանցագործներ:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ սոցիալական լուրջ խնդիրների հետեւանքով Ադրբեջանը վերածվել է ոչ միայն թմրամիջոցների տարանցիկ գոտու, այլեւ դարձել է մի երկիր, որտեղ դրանք աճեցվում եւ արտադրվում են: Սա նշանակում է՝ լուրջ նախադրյալներ կան, որոնք կարող են ադրբեջանցի ազգաբնակչությանը դրդել թմրամոլության եւ հարեւան երկիրը վերածել «թմրամոլների երկրի»:

**ԱՆԺԵԼԱ ԷԼԻԲԵԿՈՎԱ**

### ՄԵՐՈՆՔ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

# Ռուսաց գիտությունը չի մոռանում հայերին

*Յուրի Ցոլակի Հովհաննիսյան*

Ռուսաստանում հրապարակվել է գիտության եւ տեխնոլոգիաների բնագավառի այս տարվա ՌԴ պետական մրցանակի դափնեկիրների ցուցակը, որոնց թվում է նաեւ մեր հայրենակից, Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի միջուկային ռեակցիաների բաժնի ղեկավար **Յուրի Ցոլակի Հովհաննիսյանը**: Գիտական հետազոտությունների շարքը վերաբերում է գերծանր տարրերի կայունության նոր բնագավառի հայտնագործմանը: Նրա հետ մրցանակի դափնին կիսել է նույն ինստիտուտի փոխտնօրեն Միխայիլ Իտկիսը:

Ներկայացնելով ֆիզիկոսների աշխատանքը՝ ՌԴ նախագահին առընթեր գիտության, տեխնոլոգիաների եւ կրթության խորհրդի գիտական քարտուղար, «Կուրչատովսկի ինստիտուտ» ազգային հետազոտական կենտրոնի տնօրեն **Միխայիլ Կովալչուկը** այն համարել է Նոբելյան մրցանակի մակարդակի հետազոտություններ, որոնց շնորհիվ ըստ էության վերստեղծվել են այն տարրերը, որոնք լինելով տիեզերքի ծագման ուղեկիցներ, արդեն քայքայվել են: Ֆիզիկոսները սինթեզել են տարրերի մի ամբողջ շարք՝ 113-րդից մինչեւ 118-րդը, որոնք շարունակվելով, լրացնում են Մենդելեեւի աղյուսակը: Հատկանշականն այն է, որ դրանք ֆիզիկայի առումով բավականին երկար են ապրում՝ տասնյակ ժամեր, ինչը թույլ է տալիս ոչ միայն գիտելիքներ ստանալ տիեզերքի կառուցվածքի մասին, այլեւ անցնել նոր «երկարակյաց» տարրերի սինթեզին:

Մեր հայրենակցի գործընկերը՝ ակադեմիկոս Միխայիլ Իտկիսը մամուլում այն կարծիքն է հայտնել, որ Յուրի Հովհաննիսյանը առնվազն կարժանանա Նոբելյան մրցանակի. նոր տարրերի սինթեզման խնդրին նա նվիրաբերել է իր բեղմնավոր կյանքի 50 տարին, եւ ստացված գիտական արդյունքները իրավի համաշխարհային մասշտաբի են, ասել է նա: Ամերիկացիներն էլ են կատարել նման գիտափորձեր, բայց անհաջող: Առայժմ նրանք սոսկ հաստատում են Դուբնայում ստացված տվյալները: Նրանք հետ են մնացել առնվազն 10 տարով:

Յուրի Հովհաննիսյանը ծնվել է 1933 թվականին Դոնի Ռոստովում: Սովորել է Երեւանի Ձերժինսկու անվան դպրոցում, այնուհետեւ ավարտել է Մոսկվայի ինժեներաֆիզիկական ինստիտուտը: Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր է, պրոֆեսոր, Ռուսաստանի ԳԱ իսկական անդամ 2003 թվականից: Ուշագրավ է, որ նա 1975 թվականին եւս արժանացել է գիտության բնագավառի պետական մրցանակի, հասկանալի է՝ ԽՍՀՄ:

Բնական է, որ լայնորեն ճանաչված լինելով աշխարհում, պրոֆ. Հովհաննիսյանը չէր կարող քաջ հայտնի չլինել իր հայրենիքում, ուր նա հաճախ է այցելում, թարմացնում հայերենը: Նա ՀՀ գիտությունների ակադեմիայի արտասահմանցի անդամ է 2006 թվականից: Իսկ 2008 թվականին հայաստանցի գիտնականները նրան պատվել են ազգային ակադեմիայի Ոսկե մեդալով: Դուբնայում պրոֆ. Հովհաննիսյանի տանը միշտ կարելի է տեսնել տեղի թե Հայաստանից եկած գիտնականների, առհասարակ քաղաքում ապրող հայերի: «Իսկական հայն» ունի երկու դուստր, որոնցից մեկն ամուսնացած է երեւանցի հայտնի քանդակագործներից մեկի որդու հետ:

Բնավ էլ ինքնագովության նպատակով չեմ վերհիշում, որ տարիներ առաջ «**Ազգը**» հրապարակել էր իմ հարցազրույցը անվանի գիտնականի հետ, որում նա պատմում էր այն հետազոտությունների մասին, որոնք այսօր հավակնում են Նոբելյան մրցանակի: Հուսանք, որ դա առաջիկայում կիրագործվի:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# ԹՄՄ ներկայացուցիչները հանդիպել են Արամ Ա կաթողիկոսին

Լիբանանի Թեքեյան մշակութային միությունը (ԹՄՄ) ներկայացնող պատվիրակությունը երեկ Անթիլիասում այցելել է Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ին: Պատվիրակությունում ընդգրկված են եղել ատենապետ Հակոբ Գասարճյանը, ատենադպիր Արտավազդ Մելիքսեթյանը, նախկին ատենապետ Կարապետ Պապահեքյանը եւ դոկտոր Էդի Պահատրյանը: Հանդիպման ընթացքում պատվիրակության անդամները կաթողիկոսի հետ խոսել են 3 կուսակցությունների գործակցությունից, Լիբանանի կացությունից ու Հայաստան-Սփյուռք հարաբերություններից: ԹՄՄ-ն ներկայացնող անդամները հայրապետին հայտնել են նաեւ իրենց շնորհակալությունը ԹՄՄ-ի խնդրանքին ընդառաջելու եւ Կարապետ Պապահեքյանին «Կիլիկյան ասպետ» շքանշանով պարգեւատրելու համար:

**Ի. Պ.**

# Հաղթանակի առթիվ տարբեր երկրներ շնորհավորում են վարչապետ Էրդողանին

## *Իսկ Միջազգային ճգնաժամային խումբը տասը պահանջ է ներկայացնում, 7-րդը՝ Հայաստանի վերաբերյալ*

Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի հունիսի 12-ի համընդհանուր ընտրություններում վարչապետ Էրդողանի իսլամամետ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության հերթական՝ երրորդ անընդմեջ հաղթանակը շարունակում է մնալ աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցների օրակարգում:

Երեկ «Նյու Յորք թայմսը» Մեջլիսի ընտրություններին անդրադարձել է «Էրդողանը երրորդ անգամ հաղթեց», «Ուոլ սթրիթ ջորնըլը»՝ «Թուրքիայի քաղաքական կյանքում Էրդողանը մրցակից չունի», «Լոս Անջելեսը»՝ «Էրդողանին է աջակցում պահպանողական աղքատ եւ միջին խավը», անգլիական «Գարդիանը»՝ «Բարենորոգումները զարգացնելու հարցում Էրդողանը հզոր աջակցություն ստացավ ժողովրդից», «Ֆայնենշըլ թայմսը»՝ «Էրդողանը դեռեւս միջին եւ պահպանողական խավի հերոսն է», ֆրանսիական «Ֆիգարոն»՝ «Էրդողանը Աթաթուրքից հետո կարող է դառնալ երկրի ամենաերկարակյաց կառավարողը» վերնագրերով, իսկ իսրայելական «Հաարեցը» Էրդողանի կուսակցության հաղթանակը համարել է միջազգային շուկաների առումով ամենաիդեալական արդյունքը:

Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադի օրինակով հաղթանակի առթիվ Էրդողանին շնորհավորել են Իրաքի, Կոսովոյի եւ մի շարք այլ երկրների նախագահները: Այդ ընթացքում ԱՄՆ պետքարտուղարությունը Մեջլիսի ընտրությունները որակել է ազատ, արդար, թափանցիկ, շնորհավորելով Էրդողանին, իսկ Իսրայելի կառավարությունը հույս է հայտնել, որ Էրդողանի այս հաղթանակը սպիտակ, նոր էջ կբացի թուրք-իսրայելական հարաբերություններում:

Էրդողանի կուսակցության հաղթանակին գոհունակությամբ է արձագանքել նաեւ Հունաստանը, որին միացել է Կ. Պոլսո Հույն ուղղափառ եկեղեցու տիեզերական պատրիարք Բարդուղիմեոսը, հայտարարելով. «Ընտրությունների արդյունքները պատրիարքարանի տեսանկյունից դրական զարգացում են: Կառավարությունը բազմաթիվ հարցերում ընդառաջել է պատրիարքարանին: Ցանկանում ենք, որ դա շարունակվի»:

Մինչ աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցները արձագանքում էին Էրդողանի կուսակցության հաղթանակին, իսկ տարբեր երկրներ գոհունակություն էին հայտնում դրա առթիվ, Միջազգային ճգնաժամային խումբը Էրդողանի նոր կառավարության առջեւ թերեւս չկազմավորված՝ տասը պարտականություն է դնում: Ըստ «Ամերիկայի ձայնի» թուրքական ծառայության, այս կառավարությունը, որը կազմավորվելու դեպքում 61-րդն է լինելու Թուրքիայում, պետք է աշխուժացնի Եվրոմիության հետ անդամակցության բանակցությունները, ընդառաջ քայլ կատարի Կիպրոսի հիմնահարցում, սահմանադրական բարեփոխումներ անցկացնի, արագացնի քրդական հարցի լուծմանն ուղղված քայլերը, նորմալացնի հարաբերություններն Իսրայելի հետ, ձգտի հարեւան Հունաստանի հետ կարգավորել էգեյան խնդիրները, երկարաժամկետ հեռանկարում կառուցվածքային փոփոխություններ իրականացնի երկրի ներսում, բարեփոխելով դատաիրավական, ապա՝ կրթական համակարգը, պաշտպանի կանանց իրավունքներն ու վերացնի խոսքի ազատության խոչընդոտները, ինչպես նաեւ անհրաժեշտ միջոցառումներով ամրապնդի ժողովրդավարությունը Թուրքիայում:

Միջազգային ճգնաժամային խմբի՝ Էրդողանի առաջիկա կառավարությանը ներկայացրած պարտականություններից 7-րդը վերաբերում է հայ-թուրքական հարաբերություններին: Համաձայն դրա, կազմավորման դեպքում կառավարությունը պետք է ջանքեր գործադրի Հայաստան-Թուրքիա սահմանի բացումն ու երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը նախատեսող արձանագրությունները կյանքի կոչելու համար:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# «Քուրդիստանը մեր երկիրն է, իսկ Դիարբեքիրը՝ նրա մայրաքաղաքը»

*1-ին էջից*

Ինչ վերաբերում է քրդական հարցին, ապա քարոզարշավի ընթացքում վարչապետ Էրդողանը «Ի՞նչ եք արել այդ ուղղությամբ» հարցին ի պատասխան հեռուստաէկրանից հայտարարել էր. «Նախ երկրում վերացրինք ժխտողականությունը (քրդական ինքնության), հրաժարվեցինք մերժման (քրդական հարցի) եւ ուծացման (քրդերի) քաղաքականությունից: Հիմա արդեն քուրդ քաղաքացիների առջեւ ծառացած (սոցիալ-տնտեսական) խնդիրներն ենք լուծելու»:

Թուրքիայում քրդերը, շնորհիվ վարչապետ Էրդողանի «քրդական նախաձեռնության», իրենց ազգային ինքնությունն այլեւս չեն թաքցնում, հրապարակավ արտահայտվում են մայրենի քրդերենով: Ավելին՝ թուրքական հանրային հեռուստատեսության 6-րդ ալիքը քրդերեն շուրջօրյա հաղորդումներ է հեռարձակում, սակայն դա, ինչպես երեւում է, չի բավարարում հունիսի 12-ի ընտրություններին մեծամասնական ընտրակարգով միայն մասնակցած եւ Մեջլիսում պատգամավորական 36 տեղեր ստացած «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությանը:

Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ «Միլլիեթի» հունիսի 14-ի համարին, որտեղ թուրքական թերթը լուսաբանում է կուսակցության «պատմական» հաղթանակի համար Հաքքյարիում եւ Դիարբեքիրում կազմակերպված հանդիսությունները: Ի դեպ ասենք, որ Հաքքյարիին հատկացված պատգամավորական երեք, իսկ Դիարբեքիրին՝ 6 տեղերն ամբողջությամբ բաժին են հասել «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությանը:

Հաքքյարիում քաղաքապետարանի առջեւ հավաքված հոծ բազմությանը դիմել է կուսակցության ղեկավարներից Սալահաթդին Դեմիրթաշը: Նա հաղթանակի առթիվ ողջունելով հանդիսության մասնակիցներին, ասել է, որ իրենք պատրաստ են սահմանադրության հարցում ամեն տեսակի բանակցությունների, ապա եւ ավելացրել. «Մենք պատրաստ ենք նաեւ քննարկելու բոլոր հիմնախնդիրները: Քուրդ ժողովուրդը մեզ տվել է դրա արտոնությունը: Եվ հիմա արդեն խաղաղության ճանապարհը միասին ենք բացելու: Սակայն երկրում ծավալվող պատերազմի դադարեցման համար անհրաժեշտ է բանակցությունները շարունակել մեծարգո Օջալանի հետ եւ ուղղակի շփումներ հաստատել այս պատերազմում հակամարտող կողմ հանդիսացող PKK-ի հետ: Կառավարությունը չպետք է խուսափի դրանից եւ երկրում խաղաղություն հաստատելու համար PKK-ին ճանաչի որպես բանակցող կողմի»:

Գալով Դիարբեքիրի հանդիսություններին, «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության նախաձեռնությամբ կազմակերպված այս միջոցառմանը մասնակցել է շուրջ 50 հազար մարդ, եւ դա անցել էր «Քուրդիստանը մեր հայրենիքն է, իսկ Դիարբեքիրը՝ նրա մայրաքաղաքը» կարգախոսով: Մասնակիցները կրել են PKK-ի եւ նրա առաջնորդ Աբդուլլահ Օջալանի ցուցապաստառները՝ բարձրացնելով Հյուսիսային Իրաքի «Քուրդիստան» շրջանի դրոշները:

«Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության գլխավոր քարտուղարի տեղակալ Ֆիլիզ Քոչալին, դիմելով քուրդ բազմությանը, ասել է, որ Դիարբեքիրը դիմադրության, ընդվզման, ապստամբության եւ ազատության պայքարի մայրաքաղաք է նաեւ, ընտրություններում մեծ հաղթանակ են ձեռքբերել եւ այս պայքարը շարունակելու են մինչեւ անկախություն: Կուսակցության Դիարբեքիրի քաղաքային վարչության նախագահ Մեհմեդ Ալի Այդընը ավելացրել է, նշելով, որ ընտրություններում քուրդ ժողովուրդը ժողովրդավարական ինքնավարություն հաստատելու ձգտում դրսեւորեց:

Մյուսների նման մեծամասնականով անկախ պատգամավոր ընտրված Շերաֆեթդին Էլչին նշել է, որ շուտով բոլորը ազատություն կստանան, կալանավորները դուրս կգան բանտերից, եւ ավելացրել է. «Առաջնորդ Ափոն (Օջալան) եւ սարերում հպարտորեն մարտնչող հերոսները շուտով կլինեն մեզ հետ, մենք կարողացել ենք պայքարել մի ամբողջ պետության դեմ, չունենալով դրա հնարավորությունը: Դուք արժանի դաս եք տվել նրանց, ովքեր ուզում էին ձեզ ճզմել: Թեեւ Մեջլիս ենք մտնում 36 պատգամավորներով, սակայն թող ոչ ոք չփորձի մեր ուժը չափել թվերով միայն, որովհետեւ մեր թիկունքում քաջարի եւ վճռական մի ամբողջ ժողովուրդ է կանգնած»:

Ալթան Թանը հավելել է. «Եթե Արարիչը կամենա, ապա ժողովրդավար Թուրքիան ժողովրդավար Քուրդիստանի կամքով եղբայրության եւ համատեղ կառավարման օրինակ է հանդիսանալու ողջ Մերձավոր եւ Միջին Արեւելքի համար: Մենք այդպիսի ծրագրով ենք Անկարա մեկնում: Ես Անկարայում 53 գրողների ներկայությամբ վարչապետ Էրդողանին ասել էի. «Քրդերն այլեւս եղբայրություն չեն ուզում, նախ, իշխանության համատեղում, ապա նոր՝ եղբայրություն»: Քանի դեռ դուք աջակցում եք մեզ, մենք չենք ընկրկի»:

ՕՐՎԱ ԼՐԱՀՈՍԻՔ

# Բեռլուսկոնին զրկվեց անձեռնմխելիությունից



Իտալիայում անցկացված հանրաքվեի ժամանակ բնակչության մեծ մասը քվեարկել է այն օրինագծի վերացման օգտին, որը դատական անձեռնմխելիություն է տալիս կառավարության անդամներին: Ֆրանսպրեսի տվյալներով, իտալացիների 90 տոկոսը դեմ է արտահայտվել գործող օրենքին, որը, ինչպես ենթադրվում է, ստեղծվեց վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնիին քրեական պատասխանատվությունից զերծ պահելու նպատակով:

Հանրաքվեին բնակչության մասնակցությունը կազմել է 57 տոկոս, ինչը թույլ է տալիս հանրաքվեն համարել կայացած:

Ավելի վաղ կառավարությունն իր կողմնակիցներին կոչ էր արել չմասնակցել քվեարկությանը, սակայն կոչը միայն ավելացրել էր հիշյալ օրենքից դժգոհողների թիվը: Ի դեպ, Իտալիայի հանրաքվեներում 1995-ից հետո առաջին անգամ է քվորում ապահովվում:

Անձեռնմխելիության հարցից բացի, հանրաքվեի էին դրված նաեւ Իտալիայում ատոմակայանների կառուցման արգելքը վերացնելու եւ ջրամատակարարման ճյուղը մասնավորեցնելու օրենքները: Բեռլուսկոնիի կառավարությունը պաշտպանում էր այդ նախաձեռնությունները, բայց հանրաքվեի եկած իտալացիները մերժեցին դրանք:

Ներկայումս Բեռլուսկոնիի հետ կապված քննվում է մի քանի քրեական գործ: Առավել աղմկահարույց գործը վերաբերում է 75-ամյա վարչապետի եւ մի անչափահաս պարուհու կապին:

# «Հզբոլլահը» մեծամասնություն ունի Լիբանանի նոր կառավարությունում

Լիբանանի վարչապետ Նաջիբ Միկատին ավարտել է նոր կառավարություն կազմելու աշխատանքը: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ կառավարությունում տեղերի մեծամասնությունը ստացել են «Հզբոլլահ» շարժումը եւ նրա դաշնակիցները:

Կառավարության կազմավորմանն ուղղված բանակցությունները տեւել են 5 ամիս:

Լիբանանի նախագահ Միշել Սուլեյմանը վարչապետ Միկատիին կառավարություն կազմելու հանձնարարություն էր տվել հունվարի 25-ին: Սաադ Հարիրիի կառավարությունը հրաժարական էր տվել հունվարի 12-ին, երբ դրա կազմից դուրս էին եկել «Հզբոլլահի» եւ նրա դաշնակիցների 11 նախարարներ: «Հզբոլլահ» շարժումը Սաադ Հարիրիից պահանջում էր դադարեցնել համագործակցությունը Ռաֆիկ Հարիրիի սպանությունը հետաքննող Հաագայի միջազգային դատարանի հետ («Հզբոլլահում» վախենում են, որ մեղավոր կճանաչեն շարժման անդամներին):

Արեւմուտքի երկրները վերջերս երկյուղներ էին արտահայտել այն կապակցությամբ, որ Լիբանանի նոր կառավարությունում «Հզբոլլահը» կարող է գերիշխող դեր խաղալ: Դեռ կառավարության կազմավորումից առաջ ԱՄՆ-ը դադարեցրել էր զենքի մատակարարումները Լիբանանին:

# Գերմանիան ճանաչեց լիբիացի ապստամբների իշխանությունը

Գերմանիան պաշտոնապես ճանաչել է ապստամբների անցումային խորհրդին որպես Լիբիայի միակ օրինական իշխանության: Այդ մասին Ռոյթեր գործակալության թղթակցին հայտնել է ԱԱԽ ղեկավարի տեղակալ Աբդել Հաֆիզ Գոգան:

Նա համապատասխան հայտարարություն է արել Գերմանիայի արտգործնախարար Գիդո Վեստերվելլեի հետ բանակցելուց հետո: Գոգան բառացիորեն ասել է հետեւյալը. «Վեստերվելլեն անչափ պարզ արտահայտվեց. ԱԱԽ-ն լիբիացի ժողովրդի օրինական ներկայացուցիչն է»:

Բեռլինն առայժմ պաշտոնապես չի հաստատել այդ տեղեկությունը:

Ապստամբների առաջնորդները նաեւ հայտնել են, որ Վեստերվելլեն իր երկրի անունից խոստացել է օգնել ԱԱԽ-ին եւ ամբողջ լիբիական ժողովրդին: Թե դա ինչպիսի օգնություն է լինելու, ԱԱԽ անդամները չեն մանրամասնել:

# Թունիսի նախկին նախագահի դատը՝ հունիսի 20-ից

Թունիսի նախկին նախագահ Բեն Ալիի դատավարությունը սկսվելու է հունիսի 20-ին: Այդ մասին «Ալ Ջազիրա» հեռուստաալիքի եթերում հայտարարել է երկրի ժամանակավոր վարչապետ Բեջի Կաիդ Էսեբսին:

Դատավարությունը կլինի հեռակա, քանի որ Բեն Ալին հունվարի 14-ից Սաուդյան Արաբիայում է: Թունիսը հունվարի 26-ին նրան ձերբակալելու միջազգային կարգադրություն է արել, իսկ Սաուդյան Արաբիայից պահանջել է արտաքսել տապալված նախագահին: Սակայն մինչեւ օրս պատասխան չկա:

Նախկին բռնապետին եւ նրա զինակիցներին 90 կետից կազմված մեղադրանքներ են ներկայացվել: Բեն Ալին մասնավորապես մեղադրվում է սպանությունների, ունեցվածքի անօրինական ձեռքբերման եւ երկրից միջոցների դուրսբերման մեջ:

Թունիսում բողոքի բազմամարդ ցույցերը սկսվել էին 2010-ի դեկտեմբերին: Բնակչության գլխավոր պահանջներից մեկը 20 տարուց ավելի իշխած նախագահ Բեն Ալիի հրաժարականն էր: Հունվարի 14-ին նա փախավ երկրից, ապա պաշտոնանկ արվեց: Ավելի ուշ ստիպված հրաժարական տվեցին Բեն Ալիի բոլոր նախկին զինակիցները:

Թունիսյան հեղափոխությունից հետո ապստամբություններ սկսվեցին Եգիպտոսում, Բահրեյնում, Սիրիայում, Լիբիայում, Եմենում:

Վերջերս Թունիսում իրավիճակը կայուն է: Արդեն հայտնի է, որ առաջին ազատ ընտրություններն անցկացվելու են հոկտեմբերի 23-ին: Այդ օրը կստեղծվի Հիմնադիր ժողով, որի պատգամավորները կպատրաստեն երկրի նոր սահմանադրության նախագիծ, ինչպես նաեւ կնշանակեն նախագահի եւ խորհրդարանի ընտրությունների օրերը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

# Մշակույթի նախարարության ենթակառույցներում սերնդափոխությունը գաղափարական թարմացումներ է ակնկալում

Վերջին օրերին մամուլում շրջանառվում են լուրեր, թե մշակույթի նախարարի կողմից ուղարկվել են ծանուցագրեր, որ Ազգային եւ Երաժշտագիտական գրադարանների տնօրենների պաշտոնավարման ժամկետը լրանում է եւ նրանց հետ նոր աշխատանքային պայմանագրեր չեն կնքվելու:

«**Ազգը**» փորձեց որոշ ճշտումներ ստանալ նախարար Հասմիկ Պողոսյանից, սակայն վերջինիս խիստ զբաղված գրաֆիկն այդ հնարավորությունը չտվեց: Փոխարենը որոշ պարզաբանումներ «**Ազգին**» տրամադրեցին նախարարության հասարակայնության հետ կապերի պատասխանատու **Գայանե Դուրգարյանն** ու տարբեր վարչությունների աշխատակիցները: Ինչ վերաբերում է նախարարության համակարգից օտարված տարածքներին, ինչի մասին մամուլում նույնպես պնդումներ կային, տկն. Դուրգարյանը հստակեցրեց. «Վերջին 7-8 տարիների ընթացքում մշակույթի նախարարության հաշվեկշռում եղած որեւէ տարածք չի օտարվել: Դեռ ավելին, այժմ դատական կարգով նախարարությունը փորձում է հետ վերցնել ոմանց թեթեւ ձեռքով ստորագրված, վարձակալության տրված (Ազգային գրադարանի մասին է խոսքը.- Մ.Մ.) տարածքները: Այս տարիներին հետ է վերցվել նախարարությանը պատկանող ֆիլհարմոնիկի փոքր դահլիճը, եւ կրկին դատական ընթացքում է գտնվում Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը հարող սեփականաշնորհված տարածքը մշակույթի նախարարությանը վերադարձնելու հարցը»:

Ինչ վերաբերում է Երաժշտագիտական գրադարանին, այն գտնվում է քաղաքապետարանի հաշվեկշռում, եւ նախարարությունը օտարելու մասին որեւէ որոշում իրավասու չէ կայացնել, դեռ ավելին՝ նման բան գոյություն չունի»: Իսկ տնօրենների հետ նոր պայմանագրեր չկնքելը, նախարարությունից պարզեցինք, կապված է նրանց աշխատանքային պայմանագրերի ժամկետի ավարտվելու հետ, եւ նախարարությունը որպես լիազոր մարմին՝ ունի իրավունք որոշումներ կայացնելու նպատակահարմարության վերաբերյալ: Այն տնօրենները, ովքեր չեն իրականացրել նախարարության կողմից առաջադրված խնդիրները, նրանց հետ նոր աշխատանքային պայմանագրեր չեն կնքվում:

«**Ազգին**» տրամադրված մի փաստաթղթում, որում նշված էր, թե Ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանը 2007-ին, 2008-ին (խիստ), 2009-ին եւ 2010-ին նկատողություններ է ստացել «Ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու, ծառայողական դիրքը չարաշահելու, ծառայողական լիազորությունները գերազանցելու համար...»:

Մի քանի տարի առաջ, եթե հետահայաց նայենք, թե երաժշտական, թե պարային եւ թե թատերական բնագավառներում ու թանգարաններում եղան փոփոխություններ, սերնդափոխություն, եւ այդ բնագավառները սկսեցին նորովի ներկայանալ: Դրանցից միայն Սունդուկյան թատրոնի գեղղեկի հարցը չի լուծվել, սակայն պատճառը հարմար թեկնածուի բացակայությունն է: Հուսանք, որ շուտով այդ հարցն էլ կլուծվի: Իսկ թանգարանների պահոցներում գտնվող արժեքավոր փաստաթղթերից միայն 3 տոկոսն է այժմ ցուցադրվում, այն էլ՝ խղճուկ ու հնաոճ ձեւի: Արդեն պետական միջոցներով վերանորոգվում են 10 մարզային եւ Երեւանի 2 գրադարանները, որոնք տարիներ շարունակ մատնվել էին անուշադրության:

Հաշվի առնելով, որ հաջորդ տարի տոնելու ենք հայ գրատպության 500-ամյակը, եւ նաեւ Երեւանը հայտարարվել է գրքի համաշխարհային տարվա քաղաք, այսօր մշակույթի նախարարության առջեւ դրված են նոր մարտահրավերներ, եւ պետք է կարողանան կատարել բոլոր այն առաջադրանքները, որոնք ուղղված են այդ հոբելյաններին, ինչի համար թարմացումներն ու սերնդափոխությունն անհրաժեշտ ու կարեւոր դեր կխաղան, որոնք ուղղված են ընդհանուր նպատակներին: Այս օրերին էլ ճշտվում ու թարմացվում է նախարարության ենթակայության բոլոր տարածքների անձնագրային ցանկը, որն անհասկանալի պատճառով դուրս էր մնացել թանգարանների ցանկից եւ չի վերանորոգվել:

Մի խոսքով՝ այն տնօրենները, ովքեր ուզում են մնալ պաշտոնին ու աշխատել, պետք է փոխեն աշխատաոճը եւ նոր ծրագրերով ներկայանան, պնդում են նախարարության աշխատակիցները...

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Համենայն դեպս՝ բողոքի ակցիա

Երեկ երեկոյան «Ազգային գրադարանի արհեստակցական կազմակերպությունից» ստացանք հաղորդագրություն, ըստ որի այսօր, հունիսի 15-ին, ժամը 13:00-ին, Հայաստանի ազգային գրադարանի բակում գրադարանի արհմիությունը կազմակերպում է բողոքի ակցիա՝ ի պաշտպանություն գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանի:

# Արամ Խաչատրյանի անվան մրցույթում առաջին մրցանակին արժանացավ Պենգ Ցաոն

Արամ Խաչատրյանի անվան դաշնակահարների միջազգային մրցույթն ավարտվեց ու հայտնի դարձան մրցանակակիրները: Առաջին մրցանակին՝ 15.000 ԱՄՆ դոլար եւ դափնեկրի դիպլոմի արժանացավ Պենգ Ցաոն (Չինաստան), երկրորդ մրցանակը՝ 10.000 ԱՄՆ դոլար եւ դիպլոմ կիսեցին Ժորա Սարգսյանն ու Լիլիթ Գրիգորյանը (Հայաստան):

Իսկ երրորդ մրցանակին՝ 5.000 ԱՄՆ դոլար եւ դիպլոմի արժանացավ Սոնա Արշակյանը (Ռուսաստան):

Երրորդ փուլի մասնակցի դիպլոմի է արժանացել Անահիտ Դիլբարյանը (Հայաստան):

Ս. Ս.

# Մինաս Ավետիսյանի 2 որմնանկար բերվել է Երեւան

Անցյալ շաբաթ նշանավոր նկարիչ Մինաս Ավետիսյանի 2 որմնանկար Գյումրիից տեղափոխվել է Երեւան, որտեղ վերականգնումից հետո «Թել են մանում» ու «Երկանք» որմնանկարները տեղադրվելու են «Զվարթնոց» օդանավակայանում:

Մինաս Ավետիսյանի որմնանկարների վերականգնման ու տեղափոխման աշխատանքներից երեկ խոսեցին «Հենարան» ակումբի բանախոսները: Անդրադառնալով գյումրեցիների դժգոհություններին, թե ինչու են նկարները դուրս հանվում Գյումրիից՝ մշակույթի նախարարության ներկայացուցիչը՝ **Սոնա Հարությունյանը** նշեց. «Դժգոհողները ոչ թե գյումրեցիներն են, այլ մի խումբ մարդիկ, որոնք կառավարության որոշումը կատարելուն ուզում են խանգարել»: «Մինաս Ավետիսյան» հիմնադրամի նախագահ **Արման Ավետիսյանն** էլ ասաց, որ իրենց հիմնադրամի ու կառավարության միջեւ կա պայմանագիր, որի համաձայն՝ վերականգնման աշխատանքները պետք է կատարվեն կոնկրետ ժամանակում. «Իսկ եթե գյումրեցիներն ուզում էին պահել դրանք Գյումրիում, ապա ավելի վաղ պետք է հետամուտ լինեին»:



Սոնա Հարությունյանը տեղեկացրեց, որ որմնանկարների տեղափոխման առնչությամբ դժգոհություն հայտնողների հետ մշակույթի նախարարը 2 անգամ հանդիպել ու խոսել է. «Եթե նրանց կողմից մենք ստանայինք որեւէ կառուցողական առաջարկ, կընդառաջեինք: 2 օր սպասելուց հետո նախարարությունը նման առաջարկ չստացավ»: Մշակույթի նախարարության ժամանակակից արվեստի ու ժողովրդական արհեստների վարչության պետ Սոնա Հարությունյանը հավելեց, որ գյումրեցիների առաջարկին ավելի երկար սպասել չէին կարող, քանի որ վերականգնման աշխատանքներով զբաղվող իտալացի մասնագետը պետք է գար Հայաստան. «Իսկ վերջինս գալիս է այստեղ ոչ թե ժամանակ անցկացնելու, այլ ժամանակացույցով աշխատելու համար»: Ինչեւէ, ամսի 10-ին որմնանկարներն արդեն բերվել են մայրաքաղաք: «Թել են մանում» ու «Երկանք» որմնանկարների վերականգնման ծախսերը հոգում է արգենտինահայ գործարար Էդուարդո Էռնեկյանը:



Թեեւ որմնանկարները տեղադրվելու են «Զվարթնոց» օդանավակայանում, սակայն չեն լինելու գործարարի սեփականությունը: Սոնա Հարությունյանը հավաստիացնում է, որ Էդուարդո Էռնեկյանը, վճարելով որմնանկարների վերականգնման համար, որեւէ շահույթ չի հետապնդում. «Նա պարզապես բարեգործություն է անում, որմնանկարները որեւէ մեկի սեփականությունը չեն: Էռնեկյանը որմնանկարները գնել չի կարող, քանի որ դրանք Հայաստանի Հանրապետության սեփականությունն են»:

Կրկին անդրադառնալով որմնանկարները Գյումրիից մայրաքաղաք տեղափոխելու հետ կապված դժգոհություններին՝ Արման Ավետիսյանն ի պատասխան դժգոհողների նշեց. «Գյումրիում որմնանկարների մոտ կարելի՞ էր պահակ կանգնեցնել, կարելի՞ էր տանիքով ծածկել ու խուլիգանական բաներ չփորել նկարների վրա: Ինչո՞ւ են քացով խփել, ջարդել որմնանկարը»:

Ինչպես նշեց ներկա լրագրողներից մեկը, բանախոսները Գյումրիի մասին այնպես էին խոսում, կարծես ուրիշ հանրապետությունից լինեին: Ու տպավորությունն այնպիսին էր, թե այնտեղ բնակվողները հայեր չեն կամ եթե որմնանկարները տեղակայված լինեին Երեւանի որեւէ բացօթյա տեղում, ապա տեղի բնակիչներն ավելի հոգատար կլինեին: Հուշարձանների վրա գրելն ու փորելը ողջ հանրապետության տարածքում՝ այդ թվում եւ մայրաքաղաքում սովորական «երեւույթ» է: Երեւանի բացօթյա տարածքում տեղադրված որմնանկարները, միեւնույնն է կարժանանային նույն վերաբերմունքին, ինչին այսօր արժանանում են մայրաքաղաքի արձանները, խճանկարներն ու պարզապես բնակելի շենքերը, որոնց վրա խզբզելու ու փորելու համար առիթը մեր չափահաս քաղաքացիներից շատերը բաց չեն թողնում: Ամեն շենքի ու արձանի մոտ, անշուշտ, նախարարությունը պահակ կանգնեցնել չի կարող: Մնում է հուսալ, որ մեր քաղաքացիներն, ի վերջո, կփոխեն իրենց վերաբերմունքն ու ավելի շնորհքով կդառնան: Իսկ լրագրողներից մեկի դիտարկմանը՝ արդյոք հնարավոր չէ՞ր հենց Գյումրիում վերականգնել ու պահպանել Մինաս Ավետիսյանի որմնանկարները, մանավանդ որ այսօր անընդհատ խոսվում է մարզերի համաչափ զարգացումից եւ ամեն ինչ մայրաքաղաքում չկենտրոնացնելուց, Սոնա Հարությունյանը պատասխանեց, որ Գյումրիում հիմա էլ որմնանկարներ կան, որոնք ոչ միայն Մինաս Ավետիսյանի, այլեւ ուրիշ նկարիչների վրձնած գործերն են. «Գյումրին դրա՛նք կարող է վերականգնել»: Հետաքրքրական է, իսկ Գյումրին ինչպե՞ս է վերականգնելու դրանք, թե՞ Գյումրին առանձին մշակույթի նախարարություն ունի, որը զբաղվում է քաղաքի մշակութային կյանքով: Անդրադառնալով այս հարցին՝ նախարարության ներկայացուցիչը նախ նշեց, որ նախարարը մի քանի անգամ հանդիպել է Շիրակի մարզի նախկին մարզպետ Նանյանի հետ ու խոսել որմնանկարների վատթար վիճակից, ապա Ս. Հարությունյանը տեղեկացրեց, որ «Կիլիկիա» գարեջրի գործարանի ղեկավարությունը ցանկություն է հայտնել վերականգնելու Մինաս Ավետիսյանի «Գորգ են գործում» որմնանկարը, որը վերականգնումից հետո մնալու է Գյումրիում: Իսկ «Երկանք» ու «Թել են մանում» որմնանկարները վերականգնման բոլոր փուլերի ավարտից հետո, հավանաբար, մինչեւ օգոստոս ամսվա սկիզբը կտեղադրվեն «Զվարթնոց» օդանավակայանում: Չնայած իրարամերժ կարծիքներին ու խոսակցություններին, այնուամենայնիվ կարեւորը վերջնական արդյունքն ու նպատակն են՝ այն, որ ի վերջո կվերականգնվեն ու հանրությանը կցուցադրվեն մշակութային արժեքները: Օդանավակայանն հանրային այնպիսի վայր է, որտեղ մշտապես մարդկային հոսք կա, բացի դրանից՝ արտասահմանցիները եւս կհաղորդակցվեն մեր ազգային մշակույթին հենց օդանավակայանից: Սոնա Հարությունյանի փոխանցմամբ՝ «Զվարթնոցը» տարածաշրջանում կլինի միակ օդանավակայանը, որը կունենա բնական որմնանկարներ:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## Մարզական

# Էդուարդ Մարգարովը գլխավորեց «Միկան»

## *ՀՀ գավաթի եւ եվրոգավաթի ուղեգրի նվաճումն էլ Շահգելդյանին չփրկեց պաշտոնանկությունից*

Ընթացիկ մրցաշրջանում ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության մասնակից թիմերում մարզչական 2-րդ պաշտոնանկությունը գրանցվեց: Ստեւիցա Կուզմանովսկուց հետո, որը հեռացել էր «Բանանցից», իր պաշտոնից զրկվեց նաեւ «Միկայի» երիտասարդ գլխավոր մարզիչ Արմեն Շահգելդյանը: Վերջին 3 հանդիպումներում թիմի ցույց տված ցածր արդյունքի (ընդամենը 1 միավոր) համար «Միկայի» ղեկավարությունը թիմի հովանավոր Միքայել Բաղդասարովի գլխավորությամբ որոշեց հրաժարվել Արմեն Շահգելդյանի ծառայություններից: Մինչեւ մրցաշրջանի ավարտը «Միկան» կգլխավորի հայկական ֆուտբոլի անվանի վետերան Էդուարդ Մարգարովը, որն աշխատում էր ակումբում որպես մարզական տնօրեն: Քանի որ Մարգարովը ՈՒԵՖԱ-ի գործող կարգով մարզչական արտոնագիր չունի, ապա պաշտոնապես գլխավոր մարզչի պարտականությունները կկատարի Մամիկոն Ղարիբջանյանը, որին կօգնեն Հակոբ Մկրյանն ու Տիգրան Ասլանյանը: Նշենք, որ Ղարիբջանյանը «Միկայի» մանկապատանեկան ֆուտբոլի ծրագրի ղեկավարն ու մարզադպրոցի փոխտնօրենն է:



Եվ այսպես, հերթական անգամ առաջնության ընթացքում «Միկայի» գլխավոր մարզիչը պաշտոնանկ արվեց: Ակումբի ղեկավարությունը շատ խիստ է մարզիչների հանդեպ ու չի ներում սխալները: Շահգելդյանի հարցում նույնիսկ հաշվի չառնվեց, որ ընդամենը մեկ ամիս առաջ նրա գլխավորությամբ «Միկան» 6-րդ անգամ նվաճեց Հայաստանի գավաթն ու եվրոգավաթների մասնակցության իրավունք ստացավ:

Փաստորեն 37-ամյա Շահգելդյանը մեկ տարի էլ չաշխատեց «Միկայի» գլխավոր մարզչի պաշտոնում: Նա թիմի ղեկը ստանձնել էր նախորդ առաջնության 15-րդ տուրից հետո՝ փոխարինելով Արմեն Ադամյանին, նորամուտը նշելով օգոստոսի 5-ին «Փյունիկի» հետ խաղում (0-2): Շահգելդյանի գլխավորությամբ «Միկան» ՀՀ առաջնություններում անցկացրած 25 հանդիպումներից 12-ում հաղթել է, 3-ն ավարտել է ոչ-ոքի, կրել է 10 պարտություն: «Միկայի» ֆուտբոլիստները խփել են 38 գնդակ, բաց են թողել 28-ը:

Ինչ վերաբերում է Էդուարդ Մարգարովին, ապա վերջինս արդեն 3-րդ անգամ է ստանձնում «Միկայի» ղեկը: 2000-ին, երբ հիմնադրվեց «Միկան», հենց Մարգարովին վստահվեց թիմի ղեկը: Եվ փորձառու մարզիչը 2 տարի շարունակ «Միկայի» հետ Հայաստանի գավաթով պատվո շրջան կատարեց: Ճիշտ է, 2001-ի առաջնության 7-ից տուրից հետո նա իր տեղը զիջեց Սամվել Պետրոսյանին՝ ստանձնելով ակումբի փոխնախագահի պաշտոնը: Երկրորդ անգամ Մարգարովը թիմի գլխավոր մարզչի պաշտոնը ստանձնեց 2002-ին, սակայն ընդամենը 2 խաղում: Այդ տարի «Միկայում» 5 անգամ փոխվեց գլխավոր մարզիչը: Մրցաշրջանը սկսեց Ռուսաստանից հրավիրված Վալերի Գլադիլինը, որը փոխարինել էր Սամվել Պետրոսյանին: Սակայն արդեն մայիսին նա պաշտոնանկ արվեց՝ տեղը զիջելով Էդուարդ Մարգարովին: Այնուհետեւ թիմի ղեկը հաջորդաբար ստանձնեցին Արամայիս Տոնոյանը, Վաղարշակ Ասլանյանն ու Սուրեն Բարսեղյանը:

Հետագա տարիներին էլ «Միկայում» մարզչական փոփոխությունները շարունակվեցին: Թիմում աշխատեցին Արմեն Ադամյանը, Արկադի Անդրեասյանը, Իշտվան Սեկեչը, Իվո Շուշակը, Սամվել Դարբինյանը, Բաբկեն Մելիքյանն ու Արմեն Շահգելդյանը: Նշենք, որ այդ ընթացքում 2-րդ անգամ «Միկայում» գլխավոր մարզչի պաշտոնը զբաղեցրին Սուրեն Բարսեղյանն ու Արմեն Ադամյանը:

Այսպիսով, ընդհանուր առմամբ բարձրագույն խմբում հանդես գալու 12 տարվա ընթացքում «Միկայում» 16 անգամ մարզչական փոփոխություն է տեղի ունեցել, թիմը գլխավորել են 13 մարզիչներ: Բացառված չէ, որ մինչեւ առաջնության ավարտը «Միկայում» հայտնվի 14-րդ մարզիչը կամ թիմի ղեկը կրկին վստահվի նախկինում ակումբում աշխատած որեւէ մասնագետի:

# Մայք Թայսոնն ու Սիլվեստր Ստալոնեն բռնցքամարտի Փառքի սրահում

**ԱՄՆ-ի Նյու Յորքի նահանգի Կանաստոտա քաղաքում տեղի է ունեցել բռնցքամարտի Փառքի միջազգային սրահում դափնեկիրների ընդգրկման հանդիսությունը: Այդ պատվին են արժանացել հանրահայտ բռնցքամարտիկներ, աշխարհի նախկին բացարձակ չեմպիոններ Մայք Թայսոնը, Կոնստանտին Ցզյուն եւ Խուլիո Սեզար Չավես-ավագը, ինչպես նաեւ աշխարհահռչակ դերասան Սիլվեստր Ստալոնեն, հանրահայտ մարզիչ Իգնասիո Բերիստայնը եւ ռինգի մրցավար Ջո Կորտեսը:**



**Առաջին հայացքից մի փոքր տարօրինակ է, որ պրոֆեսիոնալ բռնցքամարտում մեծ հռչակ վայելած Մայք Թայսոնն ու Խուլիո Սեզար Չավեսը նոր են ընդգրկվում Փառքի սրահում: Սակայն դրանում զարմանալի ոչինչ չկա, եթե հիշենք, որ մեկ այլ լեգենդար բռնցքամարտիկ Ջորջ Ֆորմանն այդ պատվին արժանացել էր միայն 2003-ին:**

**«Անկեղծ ասած, նույնիսկ չեմ հավատում կատարվածին: Ինձ համար դժվար է զսպել զգացմունքներս: Երազում էի այդ մասին եւ այժմ երազանքս իրականություն դարձավ», հայտարարել է Թայսոնը հանդիսության ժամանակ:**

**Իսկ ահա ռուսաստանցի Կոնստանտին Ցզյուն խոստովանել է, որ նույնիսկ չի էլ մտածել, որ երբեւէ կարող է ընդգրկվել Փառքի սրահում: Ցզյուն պրոֆեսիոնալ ռինգում չեմպիոնական առաջին գոտին նվաճել է 1995-ին՝ հաղթելով IBF-ի վարկածով աշխարհի գործող չեմպիոն, պուերտոռիկացի Ջեյք Ռոդրիգեսին: 4 անգամ չեմպիոնի տիտղոսը հաջողությամբ պաշտպանելուց հետո նա պարտվեց ամերիկացի Վինս Ֆիլիպսին: Անհրաժեշտ հետեւություններ անելով պարտությունից, փոխելով մարտավարությունը, Ցզյուն նոկաուտի ենթարկեց աշխարհի նախկին 2 չեմպիոններին՝ Կելվին Գրովին եւ Ռաֆայել Ռուելասին ու կրկին իրավունք ստացավ պայքարելու չեմպիոնական գոտու համար: Այս անգամ նա 12-րդ ռաունդում նոկաուտի ենթարկելով կուբացի Դիոսբելիս Ուրտադոյին, նվաճեց WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Իսկ Զաբ Ջուդայի հանդեպ տարած հաղթանակի շնորհիվ Ցզյուն նվաճեց աշխարհի բացարձակ չեմպիոնի տիտղոսը: Նրան այդ տիտղոսից զրկեց Ռիկի Հատոնը:**

**Փառքի սրահում ընդգրկվում են նաեւ նրանք, որոնք մեծ ավանդ ունեն աշխարհում բռնցքամարտի մասսայականության գործում: Ուստի պատահական չէ Սիլվեստր Ստալոնեի հայտնվելը հանրահայտ բռնցքամարտիկների կողքին: 1976-ին նա նկարահանվել է «Ռոկկի» հանրահայտ ֆիլմում՝ իրեն դրսեւորելով որպես բավականին հմուտ բռնցքամարտիկ:**

# Բաժանվեցին խաղաղությամբ

Պրահայում մեկնարկած Սերգեյ Մովսիսյանի եւ Դավիթ Նավարայի մրցախաղի առաջին պարտիան, որում սպիտակներով խաղում էր հայ շախմատիստը, 34-րդ քայլին ավարտվեց ոչ-ոքի: Այդ պարտիայի առաջին քայլը (C2-C4) կատարեց աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդը, ինչը շատերի համար անսպասելի էր: Մրցախաղի մրցավարը նույնիսկ ստիպված էր Մովսիսյանին հարցնել, թե արդյոք նա այդ քա՞յլն էր ցանկանում կատարել:

### ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՆՎԱՃՈՒՄ

# Շնաձկները չխանգարեցին ռեկորդի սահմանմանը

**48-ամյա ավստրալուհի Պեննի Պալֆրին մարաթոնյան լողի համաշխարհային նոր ռեկորդ սահմանեց: Նա Կայմանյան երկու կղզիների՝ Օախուի եւ Կաուայի միջեւ ընկած 108 կմ տարածությունն առանց դադարի լողալով հաղթահարել է 40,5 ժամում: Ընդ որում նա լողացել է առանց լաստերի:**

**Նշենք նաեւ, որ Պալֆրին չի օգտագործել հատուկ ցանց, որպեսզի պաշտպանվի շնաձկներից, որոնց թիվը մեծ է այդ վայրում: Ռեկորդի սահմանման ընթացքում լողորդուհուն մոտորանավակներով ուղեկցել են փրկարարներն ու նրա մարզիչ Սթիվ Մյունատոնը: Նրանց հիմնական գործը եղել է շնաձկներին վախեցնելը, որպեսզի վերջիններս չվնասեին լողորդուհուն ու չխանգարեին ռեկորդի սահմանմանը:**



# Հաջող ելույթները շարունակվեցին

**Վորոնեժում ընթացող աշխարհի նախկին չեմպիոն Ալեքսանդր Ալյոխինի հուշամրցաշարի 2-րդ տուրն էլ հաղթական էր Զավեն Անդրեասյանի համար, որը պարտության մատնեց Իգոր Դմիտրիեւին: Մրցաշարի մասնակից մյուս հայ շախմատիստներն էլ հաջող խաղացին: Լիլիթ Գալոյանը հաղթեց Առնոլդ Զախարչենկոյին, Նելլի Աղինյանը պարտության մատնեց Ռուստեմ Զիաստինովին: Գեւորգ Հարությունյանը հաշտություն կնքեց Բոգդան Բելյակովի հետ:**

**2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց նաեւ Ռուսաստանը ներկայացնող Արթուր Գաբրիելյանը՝ առավելության հասնելով Ֆյոդոր Շիբաեւի նկատմամբ: Տուրը հաղթական էր նաեւ Գեւորգ Հայրապետյանի համար, որը պարտության մատնեց Գեորգի Սակվաձեին: Էդուարդ Բարսամյանը ոչ-ոքի խաղաց Սերգեյ Սերգիենկոյի հետ:**

**2 տուրից հետո 2-ական միավորով առաջատարներն են Զավեն Անդրեասյանը, Ալեքսեյ Ալեքսանդրովը, Արթուր Գաբրիելյանը, Եվգենի Շապոշնիկովը, Կոնստանտին Թառլեւը, Սուրի Վահիբհավը, Անատոլի Պոլիվանովը, Դմիտրի Կուրուկինը եւ Ալեքսեյ Պեսկովը: Լիլիթ Գալոյանը, Գեւորգ Հարությունյանն ու Նելլի Աղինյանը վաստակել են 1,5-ական միավոր: 3-րդ տուրում Անդրեասյանը սպիտակներով կխաղա Կոնստանտին Թառլեւի հետ: Արթուր Գաբրիելյանի մրցակիցը կլինի Անատոլի Պոլիվանովը:**

# Մարկոսն ու Ղազարյանը մարզվում են «Մետալուրգում»

**Ինչպես խոստացել էր «Փյունիկի» գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը, թիմի առաջատար երկու ֆուտբոլիստներ՝ Գեւորգ Ղազարյանն ու Մարկոս Պիզելին փորձաշրջանի են մեկնել Դոնեցկի «Մետալուրգ», որն այս օրերին Ուկրաինայի նոր առաջնությանը նախապատրաստվում է Ավստրիայում: «Մետալուրգն» ուսումնամարզական հավաքի ընթացքում ստուգողական մի քանի հանդիպում է անցկացնելու, որոնց մասնակցությունն էլ թույլ կտա ակումբի ղեկավարներին կողմնորոշվելու «Փյունիկի» ֆուտբոլիստների հարցում: Երեկ ուշ երեկոյան «Մետալուրգը» պետք է մրցեր «Նեոսիդլի» հետ:**

**Վերջին տարիներին գործնական լավ հարաբերություններ են ստեղծվել Դոնեցկի «Մետալուրգի» եւ հայկական ակումբներից «Բանանցի» ու «Փյունիկի» միջեւ: Դրանում իր ներդրումն ունի «Բանանցի» նախագահ Սարգիս Իսրայելյանի կրտսեր եղբայրը՝ Վարդան Իսրայելյանը, որը ժամանակին հանդես է եկել «Բանանցում», իսկ ներկայումս «Մետալուրգի» մարզական տնօրենն է: «Մետալուրգի» հովանավորը փաստորեն հովանավորում է նաեւ «Բանանցը», ուստի պատահական չեն երկու ակումբների միջեւ ֆուտբոլիստների փոխանակման դեպքերը:**

**Հիշեցնենք, որ տարբեր տարիներին «Մետալուրգում» հանդես են եկել Արա եւ Արամ Հակոբյանները, Եղիշե Մելիքյանը, Սամվել Մելքոնյանը, Արարատ Առաքելյանը, Արտակ Դաշյանն ու Հենրիխ Մխիթարյանը: Այս տարի էլ «Փյունիկից» «Մետալուրգ» տեղափոխվեց Կառլեն Մկրտչյանը:**

# Վարդան Մինասյանը Յարոսլավլ չմեկնեց

Ինչպես նախապես տեղեկացրել էինք, Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը մտադրվել էր հունիսի 14-ին ներկա գտնվել Յարոսլավլում կայանալիք «Շիննիկ»-«Ուրալ» հանդիպմանը, որպեսզի դիտեր «Շիննիկի» հարձակվող Արթուր Սարկիսովի եւ «Ուրալում» խաղացող պաշտպան Դենիս Թումասյանի խաղը:

Սակայն ինչպես տեղեկացանք «Փյունիկ» ակումբից, Մինասյանը Յարոսլավլ չի մեկնել, քանի որ Սարկիսովը որակազրկման պատճառով այդ հանդիպմանը չէր կարող մասնակցել:

# Հայ-վրացական դիմակայություն Հանքավանում

**Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 16 տարեկանների պատանեկան հավաքականը Հանքավանում հերթական ուսումնամարզական հավաքն է անցկացնում: Հավաքականի գլխավոր մարզիչ Ռոման Սիմոնյանի տրամադրության տակ են «Փյունիկի», «Բանանցի», «Միկայի», «Ուլիսի» եւ Սանկտ Պետերբուրգի «Զենիթի» ընդհանուր առմամբ 21 ֆուտբոլիստներ: Միակ լեգեոնականը «Զենիթի» պատանեկան թիմի հարձակվող Նորայր Տիգրանյանն է:**

**Մարզումներին զուգահեռ հավաքականը հունիսի 15-ին եւ 17-ին ընկերական հանդիպումներ կանցկացնի Վրաստանի իր հասակակիցների հետ:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով

## SOS. Սադրանք է

*1-ին էջից*

Ոգեւորությունն այնքան մեծ է, որ 1news.az-ի «մեկնաբանը հայկական հետք է տեսնում» անգամ Եվրոպայում հրեաների դեմ նացիստների կազմակերպած ցեղասպանության մեջ եւ ակնարկում, թե «հայտնի է հայկական կազմակերպությունների կապը ֆաշիստների հետ»: Որտեղի՞ց է հայտնի, ո՞վ է այդ մասին «վկայել»: Այդ մասին ոչինչ չի ասվում: Լրատվամիջոցը հիշեցնում է, որ «դեռեւս 1938թ. ՍՍ-ի ապագա գրուպենֆյուրեր եւ ֆաշիստական Գերմանիայի գեստապոյի պետ Հենրիխ Մյուլլերը գաղտնի ժամանել է Բաքու՝ հայկական «Դաշնակցություն» միջազգային ահաբեկչական կազմակերպության անդամներից եւ ակտիվիստներից գործակալական ցանց ստեղծելու նպատակով: «Ինժեներ Կրաուզե» անվան տակ նա 1938թ. նոյեմբերի 17-ին ժամանել է Ադրբեջանի մայրաքաղաք՝ «Կրուպ եւ ԿՕ» կամպանիայի մասնագետների պատվիրակության կազմում... Տեղեկություններ են պահպանվել «ինժեներ Կրաուզեի» եւ մի շարք հայ ահաբեկիչների հանդիպումների մասին, որոնց հովանավորում էր տեղական ՆԳԺԿ-ն, որը ոչ միայն վերահսկվում էր «Դաշնակցությունից», այլեւ կադրային տեսակետից գործնականում բաղկացած էր այդ կազմակերպության անդամներից...»:

Ըստ անկախ Ադրբեջանի հատուկ ծառայությունների, այսպիսով, 1938թ. ՀՅԴ-ն ոչ միայն Բաքվում գործել է, այլեւ վերահսկել «տեղական ՆԳԺԿ-ն», եւ ֆաշիստական գեստապոյի պետ Մյուլլերն էլ «ինժեներ Կրաուզե» ծածկանվան տակ «գործակալական ցանց է հավաքագրել»: Ինչպես ասում են՝ «եփած հավն էլ կծիծաղի»: Գուցե իրոք Մյուլլերն այցելել է Բաքու եւ գործակալական ցանց հավաքագրել, բայց թերեւս այն շրջանակներից, որ շարունակում էին գաղտնի կապեր պահել Գերմանիայի դաշնակից Թուրքիայի հետ: Իսկ Թուրքիայում էր կենտրոնացած մուսավաթական այն ամբողջ խաժամուժը, որը, 1920թ. ապրիլի 28-ին «իշխանությունը հանձնելով տեղական մուսուլմաններին», բոլշեւիկյան ղեկավարության իմացությամբ եւ աջակցությամբ բարեհաջող արտագաղթել էր:

Փաստերը համառ են: Դեռեւս 1924 թ. Ստամբուլում հրապարակվել է «Ադրբեջանական դեմոկրատական հանրապետության հիմնադիր» Մամեդ Էմին Ռասուլզադեի՝ Իոսիֆ Ստալինին հղած նամակը: Ահա. «Հարգելի Ստալին, իմ բարեկամներն անչափ զարմացան, իմանալով, որ հատուկ բաժնի բանտից ինձ ազատ են արձակել: Եվ ես նրանց հասկանում եմ. չէ՞ որ շատ բանվորների գնդակահարել են միայն այն բանի համար, որ նրանք մուսավաթական կուսակցության անդամ էին: Իսկ ես այդ կուսակցության առաջնորդն էի: Բայց այդ հրաշքը հնարավոր եղավ շնորհիվ Ձեզ, հատկապես Դուք եք հիշել մեր վաղեմի բարեկամությունը եւ ինձ դուրս քաշել Բաքվի բանտից: Այդ բարեկամությունն օգնել է ինձ նաեւ Մոսկվայում..., ինչի համար ես Ձեզ շատ երախտապարտ եմ»:

Ի՞նչ բարեկամության մասին է ակնարկը՝ գաղտնիք է: Բայց փաստ է, որ մուսավաթական կուսակցության առաջնորդին Ստալինն անձամբ է ազատել Բաքվի բանտից, իր հետ տարել Մոսկվա եւ աշխատանքի նշանակել ազգությունների կոմիսարիատում, որտեղ Ռասուլզադեն «ծառայել է» երկու տարի: 1922 թ. նա Ֆինլանդիայով «գաղտնի» գաղթել է Թուրքիա: Նամակում Ռասուլզադեն հայտարարում է, որ Ռուսաստանից փախել է, որպեսզի շարունակի իր «կյանքի գործը՝ պայքարը Ադրբեջանի անկախության համար»:

Ռասուլզադեի՝ համացանցում տեղադրված կենսագրությունից իմանում ենք, որ Երկրորդ համաշխարհային պատերազմն սկսելուց ի վեր նա գտնվել է եվրոպական տարբեր երկրներում: 1941-42 թթ. «Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության հիմնադիրը» բանակցություններ է վարել ֆաշիստական իշխանությունների հետ՝ վերմախտի կազմում «Ադրբեջանական լեգեոն» կազմավորելու հարցի շուրջը: Ռասուլզադեն համակարգել է Եվրոպայով մեկ տարածված «ադրբեջանական էմիգրանտական կազմակերպությունների» գործունեությունը, որն ուղղված էր Խորհրդային Միության դեմ: Հիմնականում քննարկվել է գերմանական զորքերի կողմից Կովկասը գրավելու դեպքում «անկախ ադրբեջանական պետության վերականգնման» խնդիրը:

Որեւէ կապ ունի՞ հրեաների դահիճ Մյուլլերի Բաքու կատարած այցը Ռասուլզադեի ու ֆաշիստական կառավարության միջեւ բանակցությունների հետ: Հարցի պատասխանը թերեւս հնարավոր է գտնել ադրբեջանական հատուկ ծառայությունների պահոցներում: Ակնհայտ է, սակայն, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին ֆաշիստական Գերմանիան ԽՍՀՄ դեմ գործակալական հզոր ցանց էր ստեղծել հատկապես Թուրքիայում, որտեղ, ինչպես ասացինք, արմատավորվել էր «Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության» ողջ վերնախավը՝ Ռասուլզադեի գլխավորությամբ: Եվ եթե ֆաշիստական Գերմանիայից բացի որեւէ մեկը պատասխանատու է հրեաների ողջակիզման համար, ապա դա կարող է լինել միայն Թուրքիան, եւ այն մարդիկ, որ այդ երկրի հովանու ներքո երազում էին իրականացնել «մեկ-երկու՝ մերն է ողջ Կովկասը» մուսավաթական երգով արտահայտված իրենց երազանքը:

*ՀԱՄԱՑԱՆՑ*

## Ինտերնետային գովազդների թիվը 2015-ին հասնելու է 31,500 միլիոնի

**Այսպիսի եզրակացության են հասել էլեկտրոնային շուկայական հարաբերությունները ուսումնասիրող մի կազմակերպության անդամները, որոնք կանխատեսում են, որ օնլայն հայտարարությունների ներդրումները շարունակվելու են ավելանալ եւ 2015-ին հասնելու են 25,6 տոկոսի, որի շնորհիվ գովազդային 2009-ի 15,100 միլիոնից հասնելու են մինչեւ 31,500 միլիոնի:**

**Ըստ «Մարկետինգի եվրոպական ինստիտուտի» ներկայիս նախագահի Կլեմենս Ֆերրերի հաղորդագրության, այս երեւույթը բացասական ազդեցություն է ունենալու ավանդական լրագրային գովազդների վրա, որոնք 2010-ի 14,9 տոկոսից զգալի նվազում են արձանագրելու առաջիկա տարիներին՝ իջնելով մինչեւ 11,4 տոկոսի: Հեռուստատեսային հայտարարությունների հայտերը, սակայն, մնալու են իրենց 40 տոկոսի սահմանագծում:**

**«Ինֆոադեքս» գովազդային ներդրումների տվյալներով, այս տարվա առաջին երեք ամիսներին ինտերնետային հայտարարությունները 18,5 տոկոսով ավելացել են, 2010 թվի 60 միլիոն եվրո ներդրումներից հասնելով 71 միլիոն եվրոյի:**

**Ինտերնետային գովազդից օգտվողների թիվը, ըստ հաղորդագրության, հասել է 10 միլիոնը, ընդ որում նրանց 83,3 տոկոսը ինտերնետին միանում է տնից, իսկ շատ փոքր մասը՝ աշխատանքի վայրից կամ համալսարաններից:** Հ. Ծ.

**Կորել է** «Նորմաստիվային հետազոտական կայան» ՊՓԲԸ-ի կլոր կնիքը եւ պետռեգիստրի գրանցման վկայականը, գրանցման համարը՝ 264.140.02790:
Համարել անվավեր:

**Կորել է** «Ագրոառողջարան» ՊՁ-ի կլոր կնիքը եւ պետռեգիստրի գրանցման վկայականը, գրանցման համարը՝ 286.140.01848:
Համարել անվավեր:

**Կորել է** «Ագրոլիցենզիա» ՊՓԲԸ-ի պետռեգիստրի գրանցման վկայականը, գրանցման համարը՝ 286.140.02606:
Համարել անվավեր:

**Կորել է** ՀՀ պարենի եւ մթերումների նախարարության «Լիլիթ» ֆիրմային խանութ ՊՁ-ի կլոր կնիքը եւ պետռեգիստրի գրանցման վկայականը, գրանցման համարը՝ 51.140.00007:
Համարել անվավեր:

**Կորել է** «Շուշան» ֆիրմային խանութ ՊՁ-ի կլոր կնիքը եւ պետռեգիստրի գրանցման վկայականը, գրանցման համարը՝ 57.140.00005:
Համարել անվավեր:

**Կորել է** «Անասնաբուժասանիտարական կայան» ՊՓԲԸ-ի կլոր կնիքը եւ պետռեգիստրի գրանցման վկայականը, գրանցման համարը՝ 271.120.02035:
Համարել անվավեր:

**Կորել է** «Ինֆոսերվիս» ՊՁ-ի կլոր կնիքը եւ պետռեգիստրի գրանցման վկայականը, գրանցման համարը՝ 286.140.01205:
Համարել անվավեր:

**Կորել է** Հրազդանի «Ագրոմեքենայացում» ՊՁ-ի պետռեգիստրի գրանցման վկայականը, գրանցման համարը՝ 33.140.01036:
Համարել անվավեր:

**Կորել է** Թումանյանի «Բերրիություն» ՓԲԸ-ի պետռեգիստրի գրանցման վկայականը, գրանցման համարը՝ 96.120.00177:
Համարել անվավեր:

**Կորել է** «Կապանի գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման կայան» ՓԲԸ-ի պետռեգիստրի գրանցման վկայականը, գրանցման համարը՝ 27.120.00971:
Համարել անվավեր:

## Orange-ը մեկնարկում է աքսեսուարների նոր հավաքածուի վաճառքը

**Orange Care-ի շրջանակներում Orange-ը հարստացրել է հեռախոսների եւ նոթբուքների համար նախատեսված աքսեսուարների հավաքածուն: Այսուհետեւ Orange-ի 78 խանութներում կարելի է ձեռք բերել ոչ միայն հեռահաղորդակցության ծառայություններ, հեռախոսներ եւ նոթբուքներ, այլ նաեւ աքսեսուարների ամբողջական շարք՝ հեռախոսների եւ նոթբուքների պայուսակներ ու պատյաններ, լիցքավորման լարեր, Bluetooth սարքեր ու տվյալների պահպանման քարտեր, ուժեղացուցիչներ եւ ականջակալներ, մկնիկներ, վեբկամեր, ինչպես նաեւ հատուկ աքսեսուարներ հեռախոսները մեքենայում կամ ջրում օգտագործելու համար:**

**«Orange Care ծառայության շրջանակում մենք, բացի արդեն ընդունված մեկ տարվա երաշխիքից, արդեն իսկ առաջարկում ենք հավելյալ ծառայություններ, ինչպես սմարթֆոնների օգտագործման փոքրիկ դասընթացներ, հեռախոսից հեռախոս ինֆորմացիայի փոխանցում եւ այլն: Մենք ցանկանում ենք, որ մեր բաժանորդը Orange-ի խանութում գտնի այն ամենը, ինչ անհրաժեշտ է իր հեռախոսի կամ նոթբուքի հարմարավետ օգտագործման համար: Այդ պատճառով Orange Care ծառայությանն ավելացնում ենք նոր ուղղություն՝ աքսեսուարները: Նոր ամառային հավաքածուն հատկապես հետաքրքրական է իր նորաոճ մոդելներով ու հնարամիտ լուծումներով եւ էականորեն կփոխի հարմարավետության մասին պատկերացումները», ասաց Orange-ի վաճառքների գծով տնօրեն Արսեն Հովհաննիսյանը:**




**Orange աքսեսուարների նոր հավաքածուի մեջ ներառված են cellular line, case-mate, GOLLA, TREXTA եւ այլ հայտնի ապրանքանիշերի աքսեսուարներ Իտալիայից, Մեծ Բրիտանիայից, Ֆինլանդիայից եւ այլ երկրներից:**

**Վաճառվում է**
**Daewoo Matiz Best**
մակնիշի ավտոմեքենա
2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝
3 600 կմ, արծաթագույն, ունի
կոնդիցիոներ, հայելիները եւ
ապակիները էլեկտր., գերազանց վիճակ է:
**Հեռ.՝ (094) 577-578**

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Յուրաքանչյուր ամսվա առաջին տասնօրյակում, ժամը 10-ին, «Հայգազարդ» ՓԲԸ-ում ՀԳԱ 0006-11 ծածկագրով կանցկացվի ընկերությանը պատկանող, Հայաստանի Հանրապետության մարզերում եւ Երեւան քաղաքում գտնվող ապրանքանյութական արժեքների մրցույթ-վաճառք:
Հայտերը ընդունվում են «Հայգազարդ» ՓԲԸ-ում, մրցույթին նախորդող 10 օրերի ընթացքում: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի եւ սոց. քարտի պատճենները, իրավաբանական անձի եւ Անհատ Ձեռներեցի դեպքում՝ պետ. գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները:
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով՝ (010)54-78-34, (010)54-78-36 կամ այցելել «Հայգազարդ» ՓԲԸ՝ ք. Երեւան, Մյասնիկյան պողոտա, 5/1 հասցեով:
*«Հայգազարդ» ՓԲԸ*

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

### ՀԻՄՆԱԴՐԱՄԻ հաշվետվությունը 2010թ. գործունեության մասին

«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի (գրանցման վկայական թիվ 03 Ա, 060694, գրանցման համար 222.160.00137) հասցեն է՝ ք. Երեւան, Մարշալ Բաղրամյան 40:

«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամը 2010թ. ընթացքում շարունակել է իրականացնել մագիստրոսի կոչում շնորհող կրթական եւ հետազոտական ծրագրեր հետեւյալ ոլորտներում՝

***Գործարարություն եւ կառավարում,***
***Արդյունաբերական ճարտարագիտություն եւ համակարգերի կառավարում,***
***Համակարգչի եւ տեղեկույթի գիտություն,***
***Քաղաքագիտություն եւ միջազգային հարաբերություններ,***
***Հանրային առողջապահություն,***
***Իրավագիտություն եւ համեմատական իրավական ուսմունքներ,***
***Անգլերենի՝ որպես օտար լեզվի դասավանդում:***

Հիմնադրամի գործունեության հիմնական նպատակն է ապահովել համալսարանական կրթություն, գիտական հետազոտությունների իրականացում եւ հասարակական ծառայությունների մատուցում համաձայն բարձրագույն կրթության միջազգային համակարգի եւ չափանիշների՝ պատրաստելով ուսանողներին ինչպես Հայաստանի, այնպես էլ տարածաշրջանի կարիքների համար, քաջալերելով եւ արժեւորելով ակադեմիական կատարելությունը, ազատ հետազոտումը, բարձրորակ գիտական աշխատանքը, ղեկավարման հմտությունը եւ հասարակությանը ծառայելու պատրաստակամությունը:

2010թ. ընթացքում օգտագործված ֆինանսական միջոցների ընդհանուր չափը կազմել է 1382539 հազ. ՀՀ դրամ: Ֆինանսավորումը կատարվել է Հայկական բարեգործական ընդհանուր միությունից /ՀԲԸՄ/, դրամաշնորհներից, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունից, անհատ բարերարներից ստացված միջոցների, ինչպես նաեւ ուսման վարձերի, ՀԲԸՄ կողմից հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով տրված Ալեք Մանուկյան 9 հասցեում գտնվող շենքի գործունեությունից եւ Հանրապետություն 8 հասցեում գտնվող վարձակալված շենքի գործունեությունից ստացված եկամուտների հաշվին:

Ֆինանսական միջոցները ծախսվել են միմիայն հիմնադրամի կանոնադրական նպատակներին համապատասխան:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 14.6.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: